

«Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ

Ֆինանսական հաշվետվություններ և
անկախ աուդիտորի եզրակացություն
2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ

Հունիս 2026

Երևան

«Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ
Տարեկան ֆինանսական հաշվետվություններ և անկախ աուդիտորի եզրակացություն
2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ

Բովանդակություն

3	Անկախ աուդիտորի եզրակացություն
6	Համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն
7	Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն
8	Դրամական հոսքերի մասին հաշվետվություն
9	Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն
10	Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունների ցանկ
11	Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

Ընկերության գտնվելու վայրը՝	Հայաստանի Հանրապետություն
Իրավական ձևը՝	Փակ բաժնետիրական ընկերություն
Հիմնական գործունեության նկարագիրը՝	Կազմակերպության գործունեության բնույթը ներկայացված է Ծանոթագրություն 1-ում
Գլխավոր տնօրեն՝	Արտաշես Կիրակոսյան

ԱՆԿԱՆ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ներկայացվում է «Միջազգային Էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ի բաժնետիրոջը և տնօրենների խորհրդին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Միջազգային Էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքի մասին, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, որոնք ներառում են հաշվապահական հաշվառման քաղաքականության էական մասերը և այլ բացատրական տեղեկատվություն:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Ընկերության ֆինանսական վիճակը 2025 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքը և դրամական հոսքերը՝ Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված ՖՅՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտների (ՖՅՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտներ) համաձայն:

Կարծիքի հիմքեր

Մենք աուդիտն իրականացրել ենք Աուդիտի Միջազգային Ստանդարտներին (ԱՄՍ-ներին) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության՝ «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում:

Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների Եթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված Պրոֆեսիոնալ հաշվապահի Եթիկայի միջազգային կանոնագրքի (ներառյալ Անկախության Միջազգային Ստանդարտները) (ՀԵՄՍԽ կանոնագիրք), և Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական հաշվետվությունների աուդիտի նկատմամբ կիրառելի Եթիկայի պահանջների, և կատարել ենք Եթիկայի պահանջման մեր այլ պարտականություններն այս պահանջներին և վերոնշյալ կանոնագրքերի համապատասխան:

Մենք հավատացած ենք, որ ձեռք ենք բերել բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության և կառավարման լիազոր անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՅՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման, ինչպես նաև այնպիսի ներքին հսկողության համակարգի համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է՝ խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Ընկերությունը լուծարելու կամ Ընկերության գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման լիազոր անձիք պատասխանատու են Ընկերության ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացությունը:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՄ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումներ, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՄ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լուրմն՝

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում:
- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե ընկերության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը:
- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք՝ արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել ընկերության անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի հաշվետվությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր հաշվետվության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել ընկերությանն դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառում:
- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, մենք տեղեկացնում ենք աուդիտի պլանավորված շրջանակի և ժամկետների, աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Այս անկախ աուդիտորական եզրակացության ներկայացման հիմք հանդիսացող աուդիտի իրականացման համար պատասխանատու գործընկերն է՝

«Բի-Դի-Օ Արմենիա» ՓԲԸ



Դավիթ Եղիզարյան, FCCA
Աուդիտի գործընկեր



Վահագն Սահակյան, FCCA
Տնօրեն

19 Հունիս 2026

Երևան

«Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ

Համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն

2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ

	Ծան.	2025թ. հազ. դրամ	2024թ. հազ. դրամ
Հասույթ	5	10,125,459	10,237,715
Վաճառքի ինքնարժեք	6	(5,795,203)	(6,698,614)
Համախառն շահույթ		4,330,256	3,539,101
Վարչական ծախսեր	7	(1,185,628)	(1,093,391)
Այլ ծախսեր	8	(22,077)	(42,795)
Այլ եկամուտ	9	10,049	130,456
Պաշարների և վարկային կորուստների գծով արժեզրկման հակադարձում/(արժեզրկում)		1,322	(15,382)
Գործառնական շահույթ		3,133,922	2,517,989
Ֆինանսական եկամուտ	10	629,352	807,203
Ֆինանսական ծախս	10	(1,166,765)	(1,493,655)
Շահույթ մինչև հարկումը		2,596,509	1,831,537
Շահութահարկի գծով ծախս	11	(456,016)	(165,024)
Տարվա շահույթ		2,140,493	1,666,513
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք		2,140,493	1,666,513

Ֆինանսական հաշվետվությունները ներկայացված 6-ից 39 էջերում հաստատվել և ստորագրվել են Ընկերության ղեկավարության կողմից 2026թ. հունիսի 19-ին:

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

Արտաշես Կիրակոսյան
Գլխավոր տնօրեն

Արուսյակ Ազիզյան
Գլխավոր հաշվապահ

«Միջազգային Էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

	Ծան	31.12.2025թ. հազ.դրամ	31.12.2024թ. հազ. դրամ
Ակտիվներ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	12	27,296,043	28,918,722
Ոչ նյութական ակտիվներ		10,210	10,660
Կանխավճարներ ոչ ընթացիկ ակտիվների ձեռքբերման համար	13	2,672,168	2,682,259
Վարկի հետաձգված նախնական վճար		73,275	73,275
Հետաձգված հարկային ակտիվներ	11	-	186,144
		<u>30,051,696</u>	<u>31,871,060</u>
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ	14	408,354	441,002
Տրամադրված ընթացիկ փոխառություններ	15	693,010	689,265
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	16	562,779	1,028,723
Վաճառքի համար պահվող ակտիվներ		766	766
Բանկային ավանդներ	17	2,450,762	1,234,384
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	18	85,437	37,917
		<u>4,201,108</u>	<u>3,432,057</u>
Ընդամենը ակտիվներ		<u><u>34,252,804</u></u>	<u><u>35,303,117</u></u>
Պարտավորություններ			
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Վարկեր և փոխառություններ	20	12,751,313	14,443,590
Հետաձգված հարկային պարտավորություններ	11	269,872	-
		<u>13,021,185</u>	<u>14,443,590</u>
Ընթացիկ պարտավորություններ			
Վարկեր և փոխառություններ	20	1,762,997	1,804,588
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	21	1,323,426	3,050,236
		<u>3,086,423</u>	<u>4,854,824</u>
Ընդամենը պարտավորություններ		<u><u>16,107,608</u></u>	<u><u>19,298,414</u></u>
Սեփական կապիտալ			
Կանոնադրական կապիտալ		4,560,650	4,560,650
Վերագնահատման պահուստ		24,367,967	24,373,450
Կապիտալի բաշխում		(66,056)	(66,056)
Կուտակված վնաս		(10,717,365)	(12,863,341)
Ընդամենը սեփական կապիտալ	19	<u>18,145,196</u>	<u>16,004,703</u>
Ընդամենը պարտավորություններ և սեփական կապիտալ		<u><u>34,252,804</u></u>	<u><u>35,303,117</u></u>

«Միջազգային Էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ

Դրամական հոսքերի մասին հաշվետվություն

2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ

	Ծան.	2025թ. հազ. դրամ	2024թ. հազ. դրամ
Գործառնական գործունեությունից դրամական հոսքեր			
Հաճախորդներից ստացված գումարներ՝ ներառյալ ԱԱՀ		12,318,487	12,232,159
Վճարումներ աշխատակիցներին՝ ներառյալ հարկերը		(1,338,086)	(1,329,234)
Վճարումներ մատակարարներին՝ ներառյալ ԱԱՀ		(3,817,138)	(5,104,909)
Վճարված հարկեր և պարտադիր վճարներ, բացի			
շահութահարկից		(1,310,952)	(1,259,027)
Վճարված տոկոսներ	20	(1,095,310)	(1,031,690)
Այլ մուտքեր		682	761
Այլ ելքեր		(11,010)	(6,287)
Գործառնական գործունեությունից դրամական զուտ հոսք		4,746,673	3,501,773
Ներդրումային գործունեությունից դրամական հոսքեր			
Ոչ ընթացիկ ակտիվների վաճառքից մուտք		3,598	-
Ոչ ընթացիկ ակտիվների ձեռքբերումից ելքեր		(2,069,809)	(3,739,782)
Ավանդների մարում		16,750,000	13,590,000
Ավանդների ներդրում		(17,950,000)	(14,820,000)
Տրամադրված փոխառությունների մարում		-	220,000
Ստացված տոկոսային եկամուտ		113,022	73,657
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր		(3,153,189)	(4,676,125)
Ֆինանսական գործունեությունից դրամական հոսքեր			
Վարկերի և փոխառությունների ներգրավում	20	-	14,815,332
Վարկերի և փոխառությունների մարում	20	(1,549,176)	(13,626,789)
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր		(1,549,176)	1,188,543
Ընդամենը դրամական միջոցների զուտ հոսքեր		44,308	14,191
Դրամական միջոցների գծով փոխարժեքային տարբերություններ		3,212	(43,002)
Դրամական միջոցների մնացորդն առ 1 հունվարի		37,917	66,728
Դրամական միջոցների մնացորդն առ 31 դեկտեմբերի		85,437	37,917

«Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն
2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ

	Կանոնադրական կապիտալ հազ. դրամ	Կապիտալի բաշխում հազ. դրամ	Վերագնահատման պահուստ հազ. դրամ	Կուտակված վնաս հազ. դրամ	Ընդամենը հազ. դրամ
Մնացորդ առ 1 հունվարի 2024թ.	4,560,650	(18,504)	24,391,658	(14,548,062)	14,385,742
Հաշվետու տարվա շահույթ	-	-	-	1,666,513	1,666,513
Վերագնահատված հիմնական միջոցների օտարում	-	-	(18,208)	18,208	-
Ընդամենը տարվա համապարփակ եկամուտ/վնաս	-	-	(18,208)	1,684,721	1,666,513
Այլ բաշխումներ	-	(47,552)	-	-	(47,552)
Մնացորդ առ 31 դեկտեմբերի 2024թ.	4,560,650	(66,056)	24,373,450	(12,863,341)	16,004,703
Մնացորդ առ 1 հունվարի 2025թ.	4,560,650	(66,056)	24,373,450	(12,863,341)	16,004,703
Հաշվետու տարվա շահույթ	-	-	-	2,140,493	2,140,493
Վերագնահատված հիմնական միջոցների օտարում	-	-	(5,483)	5,483	-
Ընդամենը տարվա համապարփակ եկամուտ/վնաս	-	-	(5,483)	2,145,976	2,140,493
Այլ բաշխումներ	-	-	-	-	-
Մնացորդ առ 31 դեկտեմբերի 2025թ.	4,560,650	(66,056)	24,367,967	(10,717,365)	18,145,196

«Միջազգային Էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունների ցանկ
2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ

1. Ընկերութան ՄԱՍԻՆ.....	11
2. ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ.....	12
3. ՆՇԱՆԱԿԱԼԻ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄՆԵՐ և ԴԱՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....	14
4. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ - ՈՒՄԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ.....	15
5. ՀԱՍՈՒՅԹ.....	21
6. ՎԱՃԱՌՔԻ ԻՆՔՆԱՐԺԵՔ.....	22
7. ՎԱՐՉԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ.....	23
8. ԱՅԼ ԾԱԽՍԵՐ.....	23
9. ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏ.....	23
10. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏ և ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ.....	23
11. ՇԱՀՈՒԹԱՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԾԱԽՍ.....	24
12. ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ.....	26
13. ԿԱՆԽԱՎՃԱՐՆԵՐ ՈՉ ԸՆԹԱՑԻԿ ԱԿՏԻՎՆԵՐԻ ՁԵՌՔԵՐՄԱՆ ՀԱՄԱՐ.....	28
14. ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ.....	28
15. ԿԱՊԱԿՑՎԱԾ ԿՈՂՄԵՐԻՆ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....	28
16. ԱՌԱՏՐԱՅԻՆ և ԱՅԼ ԴԵԲԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐ.....	29
17. ԲԱՆԿԱՑԻՆ ԱՎԱՆԴՆԵՐ.....	29
18. ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ և ԴՐԱՆՑ ՀԱՄԱՐԺԵՔՆԵՐ.....	30
19. ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ.....	30
20. ՎԱՐԿԵՐ և ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....	31
21. ԱՌԱՏՐԱՅԻՆ և ԱՅԼ ԿՐԵԴԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐ.....	32
22. ԿԱՊԱԿՑՎԱԾ ԿՈՂՄԵՐԻ ՄԻՋՆԱ ԳՈՐԾԱՐՔՆԵՐ.....	33
23. ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....	33
24. ՀԱՇՎԵՏՈՒ ԺԱՄԱՆԱԿԱԾՐՁԱՆԻՑ ՀԵՏՈ ՏԵՂԻ ՈՒՆԵՑՈՂ ԴԵՊՔԵՐ.....	34
25. ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ.....	34
ՀԱՎԵԼՎԱԾ Ա – ՖՀՄՍ 13 ԻՐԱԿԱՆ ԱՐԺԵՔԻ ՉԱՓՄԱՆ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄՆԵՐ.....	39

«Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ
Ֆինանսական հաշվետվությունների կից ծանոթագրություններ
2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)

1. Ընկերության մասին

«Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ն («Ընկերություն») հանդիսանում է փակ բաժնետիրական ընկերություն՝ Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի սահմանման համաձայն:

Ընկերության իրավաբանական հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, Երևան, 0021, Ղափանցյալ փող. 2/12: Ընկերության վարչական առավարչական ստորաբաժանումները գտնվում են Երևանում, Գեղարքունիքի և Կոտայքի մարզերում:

Ընկերության հիմնական գործունեությունը Էլեկտրաէներգիայի արտադրությունն է, Հայաստանի Հանրապետությունում գտնվող յոթ հիդրոէլեկտրակայաններից բաղկացած Սևան-Հրազդան կասկադում՝ մինչև 2032թ. գործող թիվ 0108 լիցենզիայի համաձայն: Արտադրված Էլեկտրաէներգիան վաճառվում է Հայաստանի Հանրապետությունում: Էլեկտրաէներգիայի վաճառքի սակագները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից:

2025թ. և 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության վերջնական մայր կազմակերպությունն է «Տաշիր Կապիտալ» ՓԲԸ-ն: Ընկերության վերջնական հսկող անձն է պրն. Սամվել Կարապետյանը:

Կապակցված կողմերի հետ գործարքների մանրամասները ներկայացված են Ծանոթագրություն 22-ում՝ «Կապակցված կողմերի միջև գործարքներ»:

Հայաստանի գործարար միջավայրը

Ընկերությունն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետությունում: Հետևաբար, Ընկերության գործունեության վրա ազդեցություն են ունենում Հայաստանի տնտեսությունը և ֆինանսական շուկաները: Իրավական, հարկային և օրենսդրական համակարգերը շարունակում են զարգանալ, սակայն ենթակա են տարբեր մեկնաբանությունների և հաճախակի փոփոխությունների, ինչը, այլ իրավական ու ֆինանսական խոչընդոտների հետ մեկտեղ, լրացուցիչ բարդություններ է ստեղծում Հայաստանում գործող կազմակերպությունների համար:

2025-2026 թվականներին Մերձավոր Արևելքում աշխարհաքաղաքական իրավիճակը սրվեց՝ կապված ԱՄՆ-ի, Իսրայելի, Իրանի և Նրանց տարածաշրջանային դաշնակիցների միջև ռազմական լարվածության աճի հետ: Այս զարգացումները մեծացրել են տարածաշրջանային անորոշությունը, նպաստել էներգետիկ շուկաների տատանողականությանը և բարձրացրել միջազգային փոխադրումների և առևտրի ուղիների խաթարման ռիսկերը:

Հայաստանի՝ Իրանի հետ աշխարհագրական մոտիկության և Ադրբեջանի հետ շարունակվող լարվածության պայմաններում վերոնշյալ զարգացումները հանգեցրել են տարածաշրջանում աշխարհաքաղաքական ռիսկերի աճին: Չնայած հաշվետու ամսաթվի դրությամբ Հայաստանի տարածքում անմիջական ռազմական գործողություններ չեն իրականացվել, սահմանների մոտ անկայունությունը կարող է բացասաբար անդրադառնալ տնտեսական պայմանների, սահմանային առևտրի, մատակարարման շղթաների և ներդրումային ակտիվության վրա:

Բացի այդ, Ռուսաստանի և Ուկրաինայի միջև շարունակվող հակամարտությունը նպաստում է ավելի լայն տարածաշրջանային միջավայրում անորոշության պահպանմանը:

Ռուսաստանի Դաշնության տնտեսական ակտիվությունը զգալի ազդեցություն ունի Հայաստանի տնտեսության վրա՝ պայմանավորված զգալի ֆինանսական հոսքերով, ներառյալ դրամական փոխանցումները: Հետևաբար, Ռուսաստանի նկատմամբ քաղաքական լարվածությունը, միջազգային պատժամիջոցները, շուկաների անկայունությունը, գնաճային ճնշումները և այլ ռիսկեր կարող են բացասաբար անդրադառնալ Հայաստանի տնտեսական հեռանկարների վրա:

Միևնույն ժամանակ, Հայաստանի տնտեսությունը ցուցաբերել է կայունություն զլոբալ անկայունության պայմաններում՝ գրանցելով բարձր մակրոտնտեսական ցուցանիշներ ինչպես 2024, այնպես էլ 2025 թվականներին: Աճը հիմնականում պայմանավորված է զբոսաշրջության աճով, ընկերությունների տեղափոխմամբ Հայաստան և դրամական փոխանցումների զգալի ավելացմամբ: Արդյունքում, 2025 թվականի հունվար-դեկտեմբեր ժամանակահատվածում ՀՆԱ-ի աճը կազմել է 7.1%: Կառավարության 2021-2026 թվականների տնտեսական ծրագիրը միտված է արտահանման

«Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ
Ֆինանսական հաշվետվությունների կից ծանոթագրություններ
2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)

վրա հիմնված և ներդրումներով պայմանավորված աճի մոդելի զարգացմանը՝ լայնածավալ բարեփոխումների միջոցով:

Այս միջավայրը եական ազդեցություն ունի ընկերության գործունեության և ֆինանսական վիճակի վրա: Դեկավարությունը իրականացնում է անհրաժեշտ միջոցառումներ՝ ապահովելու գործունեության կայունությունը: Այնուամենայնիվ, հաշվի առնելով աշխարհաքաղաքական և տնտեսական զարգացումների անկանխատեսելի բնույթը, դեկավարությունը չի կարող վստահորեն գնահատել դրանց հնարավոր ազդեցությունը ընկերության ապագա ֆինանսական արդյունքների և վիճակի վրա:

Ֆինանսական հաշվետվությունները արտացոլում են դեկավարության գնահատականը Հայաստանի գործարար միջավայրի և դրա ազդեցության վերաբերյալ ընկերության գործունեության և ֆինանսական վիճակի վրա: Ապագա զարգացումները կարող են տարբերվել այս գնահատականներից:

2. Պատրաստման հիմունքներ

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված ՖՀՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտների (ՖՀՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտներ) համաձայն:

Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար որդեգրված հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթները ներկայացված են Ծանոթագրություն 25-ում: Դրանք հետևողականորեն կիրառվել են ներկայացված բոլոր ժամանակաշրջանների համար, եթե այլ բան նշված չէ:

Ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են ՀՀ դրամով, որը հանդիսանում է նաև ընկերության գործառնական արժույթը: Գումարային արժեքները կլորացվել են հազարներով, եթե այլ բան նշված չէ:

ՖՀՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտների համաձայն ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս անհրաժեշտ է կատարել հաշվապահական հաշվառման նշանակալի գնահատումներ և դատողություններ: Վերջիններիս կիրառման ոլորտները և ազդեցությունը բացահայտված են Ծանոթագրություն 3-ում:

Հափման հիմքերը

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի հիման վրա բացառությամբ հիմնական միջոցների, որոնք ներկայացված են վերագնահատված արժեքով:

Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխություններ

ա) 2025թ. հունվարի 1-ից ուժի մեջ մտած նոր ստանդարտներ, մեկնաբանություններ և փոփոխություններ

Փոխանակելիության բացակայություն (ՀՀՄՍ 21-ի փոփոխություն)

2023 թվականի օգոստոսի 15-ին ՀՀՄՍ-ն հրապարակեց «Փոխանակելիության բացակայություն»-ը, որով փոփոխվեց ՀՀՄՍ 21 «Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների ազդեցությունը» (Փոփոխություններ):

- Փոխանակելիության բացակայություն (ՀՀՄՍ 21 «Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների ազդեցությունը» (Փոփոխություն))

2023 թվականի օգոստոսի 15-ին ՀՀՄՍ-ն հրապարակեց «Փոխանակելիության բացակայություն»-ը, որով փոփոխվեց ՀՀՄՍ 21 «Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների ազդեցությունը» (Փոփոխություններ): Փոփոխությունները պահանջում են գնահատել, թե երբ է արժույթը փոխանակելի այլ արժույթի հետ, և երբ՝ ոչ: Փոփոխությունների համաձայն կազմակերպությունը պետք է գնահատի սփոթ փոխարժեքը, եթե այն եզրակացնում է, որ արժույթը փոխանակելի չէ այլ արժույթի հետ:

«Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ
Ֆինանսական հաշվետվությունների կից ծանոթագրություններ
2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)

Այս փոփոխությունները որևէ ազդեցություն չեն ունեցել Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա:

(բ) Հրապարակված, բայց դեռ ուժի մեջ չմտած ստանդարտներ, մեկնաբանությունները և փոփոխությունները

Կան մի շարք ստանդարտներ, ստանդարտների փոփոխություններ և մեկնաբանություններ, որոնք թողարկվել են ՀՀՄՍԽ-ի կողմից և գործելու են ապագա հաշվետու ժամանակաշրջաններում, որոնք սակայն Ընկերությունը որոշել է վաղաժամ չընդունել:

Հետևյալ փոփոխություններն ուժի մեջ են մտնում 2026 թվականի հունվարի 1-ից սկսած տարեկան ժամանակաշրջանների համար:

- Փոփոխություններ ֆինանսական գործիքների դասակարգման և չափման մեջ (ՀՀՄՍ 9-ի («Ֆինանսական գործիքներ») և ՀՀՄՍ 7-ի («Ֆինանսական գործիքներ. Բացահայտումներ») փոփոխություններ)
- Բնությունից կախված էլեկտրաէներգիայի վերաբերյալ պայմանագրեր (ՀՀՄՍ 9-ի և ՀՀՄՍ 7-ի փոփոխություններ):

Հետևյալ փոփոխություններն ուժի մեջ են մտնում 2027 թվականի հունվարի 1-ից սկսած ժամանակաշրջանի համար.

ՀՀՄՍ 18 Ներկայացում և բացահայտում ֆինանսական հաշվետվություններում

- «Ներկայացում և բացահայտում ֆինանսական հաշվետվություններում» ՀՀՄՍ 18-ը փոխարինում է «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում» ՀՀՄՍ 1-ին և պարտադիր բնույթ է կրում 2027 թվականի հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար: ՀՀՄՍ 18-ը, որը հրապարակվել է ՀՀՄՍԽ-ի կողմից 2024 թվականի ապրիլի 9-ին, սահմանում է զգալի նոր պահանջներ ֆինանսական հաշվետվությունների ներկայացման համար՝ կենտրոնանալով հետևյալի վրա.
- Շահույթի կամ վնասի մասին հաշվետվությունը, ներառյալ պահանջները պարտադիր ենթագումարների համար, որոնք պետք է ներկայացվեն: ՀՀՄՍ 18-ը ներկայացնում է պահանջներ եկամուտների և ծախսերի հոդվածների համար, որոնք պետք է դասակարգվեն ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում հինգ կատեգորիաներից մեկում: Այս դասակարգման արդյունքում ներկայացվում են որոշակի ենթագումարներ, օրինակ՝ գործառնական կատեգորիայի բոլոր եկամուտների և ծախսերի հոդվածների հանրագումարը, ներառյալ «գործառնական շահույթի կամ վնասի» նոր պարտադիր ենթագումարը:
- Տեղեկատվության համախմբում և տարանջատում, ներառյալ ընդհանուր սկզբունքների ներդրումը, թե ինչպես պետք է տեղեկատվությունը համախմբվի և տարանջատվի ֆինանսական հաշվետվություններում:
- Դեկավարության կողմից սահմանված կատարողականի չափորոշիչներին (MPM) առնչվող բացահայտումներ, որոնք ֆինանսական կատարողականի չափումներ են՝ հիմնված ՀՀՄՍ-ներով պահանջվող ընդհանուր կամ ենթաընդհանուր գումարի վրա համապատասխան ճշգրտումներով (օրինակ՝ «ճշգրտված շահույթ կամ վնաս»): Կազմակերպություններից կպահանջվի բացահայտել MPM-ն իրենց ֆինանսական հաշվետվություններում, ներառյալ MPM-ի համադրումը ՀՀՄՍ-ի ստանդարտներին համապատասխան հաշվարկված մոտակա ընդհանուր կամ ենթաընդհանուր գումարի հետ: ՀՀՄՍ 18-ի նպատակն է բարելավել ընկերությունների գործունեության արդյունքների վերաբերյալ հաշվետվությունների համեմատելիությունը և թափանցիկությունը: ՀՀՄՍ 18-ը նաև հանգեցրել է չնչին փոփոխություններին դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունում:

ՀՀՄՍ 19 Դուստր ընկերություններ առանց հանրային ֆինանսական հաշվետվողականության. Բացահայտումներ

2024 թվականի մայիսի 9-ին ՀՀՄՍԽ-ը հրապարակեց ՀՀՄՍ 19-ը՝ «Դուստր ընկերություններ առանց հանրային ֆինանսական հաշվետվողականության. բացահայտումներ»: Շահագրգիռ կողմերը դիմել

«Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ
Ֆինանսական հաշվետվությունների կից ծանոթագրություններ
2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)

Էին ԶՅՍԽ՝ խնդրելով թույլատրել դուստր կազմակերպությանը, որը հաշվետու է իր համախմբված ֆինանսական հաշվետվություններում ՖՅՍՍ կիրառող մայր կազմակերպության առջև, կիրառել ՖՅՍՍ-ներն իր սեփական ֆինանսական հաշվետվություններում բացահայտման նվազեցված պահանջներով: Ելնելով այս դիմումից՝ ԶՅՍԽ-ը իր հետազոտական պորտֆելում ավելացրեց մի նախագիծ առանց հանրային ֆինանսական հաշվետվողականության դուստր ընկերությունների համար բացահայտման նվազեցված պահանջներ ապահովելու վերաբերյալ: Նախագիծն ավարտվեց ՖՅՍՍ 19-ի թողարկմամբ, որը համապատասխան դուստր ընկերություններին թույլ է տալիս կիրառել բացահայտման նվազեցված պահանջներ՝ միաժամանակ կիրառելով ճանաչման, չափման և ներկայացման պահանջները: Օրինակ, ՖՅՍՍ 19-ի համաձայն, կազմակերպությունը, որն ունի գործարքներ ՖՅՍՍ 2-ի /բաժնետոմսերի վրա հիմնված վճարումներ/ շրջանակներում, չի կիրառի ՖՅՍՍ 2.44-52-ի բացահայտման պահանջները, որոնք շատ ընդարձակ են: Փոխարենը, կազմակերպությունը պետք է բացահայտի միայն ՖՅՍՍ 19-ի 31-34-րդ պարագրաֆների տեղեկատվությունը, որը ներառում է բաժնետոմսերի վրա հիմնված վճարման պայմանավորվածությունների նկարագրությունը, բաժնետոմսերի օպցիոնների չափը և իրագործման միջին կշռված արժեքները, կազմակերպության՝ բաժնետոմսերի վրա հիմնված վճարման գործարքների իրական արժեքը չափելու կարգը, ինչպես նաև ՖՅՍՍ 2-ի շրջանակներում գործարքների վերաբերյալ այլ ընդհանուր տեղեկությունները:

Բացահայտման պահանջների կրճատման աստիճանը պատկերացնելու համար պետք է նշել, որ ՖՅՍՍ 2-ի՝ բացահայտման պահանջներին վերաբերող հատվածը ներկայումս պարունակում է 991 բառ, մինչդեռ ՖՅՍՍ 19-ը պարունակում է ընդամենը 250 բառ՝ կապված ՖՅՍՍ 2-ի համաձայն տեղեկատվության բացահայտման հետ: ՖՅՍՍ 19-ի պահանջներին համապատասխանելու չափանիշները հետևյալն են.

- Կազմակերպությունը դուստր ընկերություն է հանդիսանում (ինչպես սահմանված է ՖՅՍՍ 10-ի /Համախմբված ֆինանսական հաշվետվություններ/ Հավելված Ա-ում),
- Կազմակերպությունը չունի հանրային հաշվետվողականություն, և
- Կազմակերպությունն ունի վերջնական կամ միջանկյալ մայր ընկերություն, որը իրապարակում է հանրային օգտագործման համար հասանելի համախմբված ֆինանսական հաշվետվություններ, որոնք համապատասխանում են ՖՅՍՍ հաշվապահական հաշվառման ստանդարտներին: Կազմակերպությունն ունի հանրային հաշվետվողականություն, եթե.
- նրա պարտքային կամ բաժնային գործիքները շրջանառվում են բաց շուկայում, կամ այն գտնվում է բաց շուկայում շրջանառելու համար այդպիսի գործիքներ թողարկելու գործընթացում, կամ
- այն ֆիզուցիար պարտականությունների շրջանակում պահում է ակտիվներ արտաքին կողմերի լայն խմբերի համար՝ որպես իր հիմնական գործունեություններից մեկը:

Ընկերությունը ներկայումս գնահատում է այս նոր հաշվապահական ստանդարտների և փոփոխությունների ազդեցությունը: Ընկերությունը չի ակնկալում, որ փոփոխությունները էական ազդեցություն կունենան իր ֆինանսական հաշվետվությունների վրա:

Ընկերությունը չի ակնկալում, որ ԶՅՍԽ-ի կողմից թողարկված այլ ստանդարտներ, որոնք դեռ կիրառության մեջ չեն մտել, էական ազդեցություն կունենան Ընկերության վրա:

3. Նշանակալի հաշվապահական գնահատումներ և դատողություններ

Ընկերությունը կատարում է որոշ գնահատումներ և ենթադրություններ ապագա ժամանակաշրջանների վերաբերյալ: Գնահատումներն ու դատողությունները մշտապես վերանայվում են՝ հիմնվելով պատմական փորձի և այլ գործոնների վրա, ինչպես նաև ապագա իրադարձությունների վերաբերյալ ողջամիտ ակնկալիքների վրա: Այդուհանդերձ, փաստացի փորձը կարող է տարբերվել կատարված գնահատումներից և ենթադրություններից: Ստորև ներկայացված են այն գնահատումները և ենթադրությունները, որոնք պարունակում են զգալի ռիսկ, քանի որ հաջորդ ֆինանսական տարում կարող են ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների էական ճշգրտումների պատճառ հանդիսանալ:

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետ (Ծանոթագրություն 25)

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետների գնահատումը (Ծանոթագրություն 25) դատողության հարց է, որը հիմնված է նման ակտիվների օգտագործման փորձի վրա: Ակտիվների

«Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ
Ֆինանսական հաշվետվությունների կից ծանոթագրություններ
2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)

ապագա տնտեսական օգուտները հիմնականում սպառվում են օգտագործման միջոցով: Սակայն այլ գործոններ, ինչպիսիք են տեխնիկական կամ առևտրային հնուությունը, մաշվածությունը, հաճախ հանգեցնում են ակտիվների մեջ արտացոլված տնտեսական օգուտների նվազմանը:

Ղեկավարությունը գնահատում է մնացած օգտակար ծառայության ժամկետները ըստ ակտիվների ընթացիկ տեխնիկական վիճակի և գնահատված ժամանակահատվածի, որի ընթացքում ակնկալվում է, որ ակտիվները կազմակերպության համար տնտեսական օգուտներ կբերեն:

Հիմնական միջոցների մաշվածության հետ կապված հաշվապահական հաշվառման գնահատումների կիրառման ժամանակ կատարված ղեկավարության ենթադրությունների վերաբերյալ տեղեկատվությունը, որոնք նշանակալի ազդեցություն ունեն ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարների վրա, ներկայացված է Ծանոթագրություն 12-ում:

Հիմնական միջոցները վերագնահատվում են կանոնավոր հիմունքով՝ կախված դրանց իրական արժեքի փոփոխություններից: Վերագնահատման աճը ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքում, իսկ նվազումը՝ շահույթում կամ վնասում, բացառությամբ նախկին վերագնահատումների վերականգնման դեպքերի:

Պաշարների արժեզրկման պահուստ (Ծանոթագրություն 14)

Ընկերության յուրաքանչյուր տարվա վերջում գնահատում և ճանաչում է արժեզրկման հայտանիշ ունեցող պաշարների, մասնավորապես դանդաղաշարժ կամ հետագա օգտագործման համար ոչ պիտանի պաշարների գծով, արժեզրկման գումարը:

Իրական արժեքի չափում

Մի շարք ակտիվներ և պարտավորություններ պահանջվում է չափել իրական արժեքով և/կամ բացահայտել դրանց իրական արժեքը Ընկերության ֆինանսական հաշվետվություններում:

Ընկերության ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի չափման համար հնարավորինս օգտագործվում են շուկայական դիտելի ելակետային տվյալներ: Իրական արժեքի չափման համար օգտագործվող ելակետային տվյալները դասակարգվում են ըստ տարբեր մակարդակների՝ կախված նրանից, թե որքանով են գնահատման մեթոդի մեջ օգտագործվող տվյալները դիտելի («իրական արժեքի հիերարխիա»):

- *Մակարդակ 1.* Նույնական ակտիվների կամ պարտավորությունների համար ակտիվ շուկաներում գնանշվող գներ (չճգրտված)
- *Մակարդակ 2:* Ուղղակի կամ անուղղակիորեն դիտելի ելակետային տվյալներ՝ բացառությամբ 1-ին մակարդակում ներառվող գնանշվող գներից
- *Մակարդակ 3:* Ոչ դիտելի ելակետային տվյալներ (այսինքն՝ հիմնված չեն շուկայական տվյալների վրա)

Ակտիվների և պարտավորությունների դասակարգումը վերոնշյալ մակարդակներում հիմնվում է ամենացածր մակարդակի ելակետային տվյալների վրա, որոնք ունեն զգալի ազդեցություն իրական արժեքի չափման վրա: Տեղափոխությունը մի մակարդակից մյուսը ճանաչվում է այն ժամանակաշրջանում, որի ընթացքում այն տեղի է ունենում:

4. Ֆինանսական գործիքներ - ռիսկերի կառավարում

Իր գործունեության արդյունքում Ընկերությունը կարող է ենթարկվել հետևյալ ֆինանսական ռիսկերին՝

- Պարտքային ռիսկ
- Իրացվելիության ռիսկ
- Շուկայական ռիսկ

Ընկերությունը կարող է ենթարկվել իր կողմից ֆինանսական գործիքների օգտագործումից առաջացող ռիսկերի, ինչպես բնորոշ է մյուս բոլոր ձեռնարկատիրական գործունեություններին:

«Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ
Ֆինանսական հաշվետվությունների կից ծանոթագրություններ
2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)

Սույն ծանոթագրությունում ներկայացված են Ընկերության նպատակները, բաղաբաղանդությունը, ռիսկերի կառավարման գործընթացները և դրանց չափման մեթոդները: Սույն ֆինանսական հաշվետվություններում ներկայացված է բանական տեղեկատվություն վերոնշյալ ռիսկերի վերաբերյալ:

Ղեկավարությունը պատասխանատվություն է կրում Ընկերության ռիսկերի կառավարման համակարգի մշակման և վերահսկողության համար:

Ֆինանսական գործիքներից առաջացող ռիսկերի, Ընկերության նպատակների, բաղաբաղանդության, ռիսկերի կառավարման գործընթացների և դրանց չափման մեթոդների հետ կապված նախորդ ժամանակաշրջանների համեմատ էական փոփոխություններ չեն գրանցվել (եթե այլ բան սահմանված չէ):

(ա) Հիմնական ֆինանսական գործիքներ

Ընկերության հիմնական ֆինանսական գործիքները, որոնցից առաջանում են ռիսկեր, ներկայացված են ստորև.

- Բանկային ավանդներ
- Տրամադրված ընթացիկ փոխառություններ
- Առևտրային դեբիտորական պարտքեր
- Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ
- Վարկեր և փոխառություններ
- Առևտրային կրեդիտորական պարտքեր

(բ) Ֆինանսական գործիքներ ըստ խմբերի

Ֆինանսական ակտիվներ	Ամորտիզացված արժեքով չափվող	
	31/12/2025թ. հազար դրամ	31/12/2024թ. հազար դրամ
Բանկային ավանդներ	2,450,762	1,234,384
Տրամադրված ընթացիկ փոխառություններ	693,010	689,265
Առևտրային դեբիտորական պարտքեր	458,977	630,425
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	85,437	37,917
	3,688,186	2,591,991

Ֆինանսական պարտավորություններ	Ամորտիզացված արժեքով չափվող	
	31. 12. 2025թ. հազ. դրամ	31. 12. 2024թ. հազ. դրամ
Վարկեր և փոխառություններ	14,514,310	16,248,178
Առևտրային կրեդիտորական պարտքեր	1,119,252	2,867,737
	15,633,562	19,115,915

(գ) Իրական արժեքով չչափվող ֆինանսական գործիքներ

Իրական արժեքով չչափվող ֆինանսական գործիքները ներառում են բանկային ավանդները, տրամադրված ընթացիկ փոխառությունները, առևտրային դեբիտորական պարտքերը, դրամական միջոցները և դրանց համարժեքները, վարկերը և փոխառությունները, առևտրային կրեդիտորական պարտքերը:

Լշված ֆինանսական գործիքների հաշվեկշռային արժեքը մոտավորապես հավասարվում է իրական արժեքին:

Հավելված Ա-ում ներկայացված են իրական արժեքի հիերարխիայի, գնահատման մեթոդների և վարկերի ու փոխառությունների իրական արժեքի որոշման հետ կապված նշանակալի ոչ դիտելի ելակետային տվյալների մանրամասներ, որոնք ընդգրկված են իրական արժեքի հիերարխիայի 3-րդ մակարդակում:

«Միջազգային Էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ
Ֆինանսական հաշվետվությունների կից ծանոթագրություններ
2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)

Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկը ֆինանսական վնասների ռիսկն է՝ պայմանավորված հաճախորդի կամ ֆինանսական գործիքի կողմերի պայմանագրային պարտականությունների չկատարմամբ:

Պարտքային ռիսկն առաջանում է նաև բանկերում պահվող դրամական միջոցներից, դրանց համարժեքներից և բանկային ավանդներից: Ընկերությունն իր միջոցները տեղաբաշխում է միայն հայաստանյան խոշորագույն բանկերում:

Առևտրային դեբիտորական պարտքեր

Պարտքային ռիսկին Ընկերության ենթարկվածությունը հիմնականում կախված է յուրաքանչյուր պատվիրատուի առանձնահատկություններից: Այնուամենայնիվ, ղեկավարությունը դիտարկում է նաև պատվիրատուների գործոնների կառուցվածքը, ներառյալ այդ պատվիրատուների արդյունաբերության ճյուղերի ու երկրների դեֆոլտի ռիսկը, քանի որ այս գործոնները կարող են ազդեցություն ունենալ պարտքային ռիսկի վրա, հատկապես ներկայիս տնտեսական պայմաններում:

Ընկերությունը սահմանափակում է պարտքային ռիսկի իր ենթարկվածությունը՝ առևտրային դեբիտորական պարտքերի համար սահմանելով առավելագույն վճարման ժամկետ մեկ ամիս բոլոր հաճախորդների համար:

Ընկերության ոչ մի հաճախորդ չունի արտաքին վարկային վարկանիշ: Բոլոր մնացորդները կորպորատիվ հաճախորդներ են և Ընկերությունը բոլոր հաճախորդների պարտքային ռիսկը ցածր է գնահատում: Կազմակերպության հաճախորդներից ոչ մեկի ռիսկը սկզբնական ճանաչման պահից նշանակալի չի աճել:

Ընկերությունը յուրաքանչյուր դիրքում բաշխում է վարկային ռիսկի աստիճանը՝ հիմնվելով այն տվյալների վրա, որոնք որոշվում են կորստի ռիսկը կանխատեսելիս (ներառյալ, բայց չսահմանափակվելով արտաքին վարկանիշներով, առևտրի ենթարկված ֆինանսական հաշվետվություններով, կառավարչական հաշիվներով և դրամական հոսքերի կանխատեսումներով, ինչպես նաև հաճախորդների մասին հասանելի մամուլի տեղեկատվությամբ) և կիրառելով փորձագետների վրա հիմնված վարկային դատողություններ: Վարկային ռիսկը որոշվում է քանակական և որակական գործոններով, որոնք կարող են լինել սնանկացման ռիսկի ցուցիչներ և կապված են արտաքին կրեդիտ գնահատման «Moody's Investor's Services»-ի իրականացրած գնահատման հետ:

Ընկերությունը չի պահանջում գրավ առևտրային և այլ դեբիտորական պարտքերի համար:

Ակնկալվող պարտքային կորուստների գնահատում

31.12.2025			
հազ. դրամ	Միջին կշռված կորստի տոկոս	Համախառն հաշվեկշռային գումար	Արժեզրկումից կորստի գումարը
Դեբիտորական պարտքեր և պայմանագրային ակտիվներ			
Ցածր ռիսկ	2.18%	469,208	(10,231)
		469,208	(10,231)
31.12.2024			
հազ. դրամ	Միջին կշռված կորստի տոկոս	Համախառն հաշվեկշռային գումար	Արժեզրկումից կորստի գումարը
Դեբիտորական պարտքեր և պայմանագրային ակտիվներ			
Ցածր ռիսկ	1.63%	640,895	(10,470)
		640,895	(10,470)

«Միջազգային Էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ
Ֆինանսական հաշվետվությունների կից ծանոթագրություններ
2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունն ուներ 85,437 հազար ՀՀ դրամ գումարով բանկային հաշիվների մնացորդներ (2024թ.՝ 37,917 հազար ՀՀ դրամ), որոնք իրենցից ներկայացնում են պարտքային ռիսկին ենթարկվածության առավելագույն չափն այդ ակտիվների գծով:

2024թ. դեկտեմբերի 31-ի և 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ընդհանուր դրամական միջոցների և դրանց համարժեքների 100% պահվում է «Moody's Investor Services» գործակալության կողմից տրված «Ba3» վարկանիշով բանկում:

Դրամական միջոցների և դրանց համարժեքների գծով արժեզրկումը չափվել է 12-ամսյա ակնկալվող պարբային կորուստների հիման վրա և արտացոլում է ռիսկին ենթարկվող գործիքների կարճ ժամկետները: Հիմք ընդունելով պայմանագրային կողմերի արտաքին վարկանիշները ընկերությունն իր դրամական միջոցների և դրանց համարժեքների և ավանդների պարտքային ռիսկը գնահատում է ցածր:

Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկը ֆինանսական գործիքների ապագա դրամական հոսքերի իրական արժեքի փոփոխության ռիսկն է շուկայական գների փոփոխության արդյունքում: Շուկայական ռիսկը բաղկացած է երեք տեսակի ռիսկերից՝ ապրանքների գնի, տոկոսադրույքի և արտարժույթի փոխարժեքի ռիսկերից: Շուկայական ռիսկի ներգործությանը ենթարկված ֆինանսական գործիքները ներառում են վարկերը և փոխառությունները, դրամական միջոցները և դրանց համարժեքները, տրամադրված փոխառությունները, առևտրային դեբիտորական և կրեդիտորական պարտքերը և ավանդները:

Ընկերությունը ենթարկվում է շուկայական ռիսկի: Շուկայական ռիսկը հիմնականում կապված է Ընկերության համար սահմանված սակագների հետ և ազդում է Էլեկտրաէներգիայի ձեռքբերման գնի և այն գնի վրա, որը կարող է սահմանվել օգտագործողների համար՝ սպառված Էլեկտրականության համար: Թեև Ընկերությունը կարող է ազդել որոշ սահմանված սակագների չափերի վրա, սակագների չափերը գտնվում են վերահսկողության սահմաններից դուրս, և քաղաքական գործոնները նույնպես դեր են խաղում վերջնական սակագների վերաբերյալ որոշում կայացնելիս:

Արտարժույթային ռիսկ

Արտարժույթային ռիսկն առաջանում է, երբ Ընկերության գործարքներն արտահայտված չեն գործառնական արժույթով:

Այլ արժույթով արտահայտված ակտիվների և պարտավորությունների համար Ընկերությունը հղում է կատարում ՀՀ կենտրոնական բանկի կողմից հրապարակված փոխարժեքներին հաշվետու ամսաթվի դրությամբ, որոնք ներկայացված են ստորև (արտարժույթի մեկ միավորի արժեք արտահայտված ՀՀ դրամով).

	31. 12. 2025թ. հազ. դրամ	31.12.2024թ. հազ. դրամ
1 ԱՄՆ դոլար	381,36	396. 56
1 ԵՎՐՈ	449.01	413.89

«Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ
Ֆինանսական հաշվետվությունների կից ծանոթագրություններ
2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)

2025թ. և 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության արտարժույթային ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների կառուցվածքն ըստ արժույթների ներկայացված է ստորև՝

	ԱՄՆ դոլար	
	31.12.2025թ. հազ. դրամ	31.12.2024թ. հազ. դրամ
Ֆինանսական պարտավորություններ		
Վարկեր և փոխառություններ	(12,953,627)	(14,771,336)
Առևտրային կրեդիտորական պարտքեր	(820,279)	(852,973)
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	(13,773,906)	(15,624,309)
Զուտ դիրքը	(13,773,906)	(15,624,309)

Հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ դրամի նկատմամբ ԱՄՆ դոլարի 10% արժևորումը/(արժեզրկումը) այլ փոփոխականների հաստատուն մնալու պայմանով կհանգեցնի Ընկերության զուտ ակտիվների և տարվա ֆինանսական արդյունքի (նվազմանը)/աճին՝ 1,377,391 հազար դրամի չափով (2024թ.՝ 1,562,430 հազար դրամ), միևնույն ժամանակ:

	Եվրո	
	31.12.2025թ. հազ. դրամ	31.12.2024թ. հազ. դրամ
Ֆինանսական պարտավորություններ		
Վարկեր և փոխառություններ	(1,560,683)	(1,476,828)
Զուտ դիրքը	(1,560,683)	(1,476,828)

Հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ դրամի նկատմամբ Եվրոյի 10% արժևորումը/(արժեզրկումը) այլ փոփոխականների հաստատուն մնալու պայմանով կհանգեցնի Ընկերության զուտ ակտիվների և տարվա ֆինանսական արդյունքի (նվազմանը)/աճին՝ 156,068 հազար դրամի չափով (2024թ.՝ 147,683 հազար դրամ), միևնույն ժամանակ:

Տոկոսադրույքի ռիսկ

Տոկոսադրույքների փոփոխություններն ազդեցություն են ունենում հիմնականում տրամադրված փոխառությունների և վարկերի վրա՝ փոխելով կա՛մ դրանց իրական արժեքը (հաստատուն տոկոսադրույքով պարտք), կա՛մ ապագա դրամական հոսքերը (փոփոխուն տոկոսադրույքով պարտք):

Ղեկավարությունը չի կիրառում հաստատուն կամ փոփոխուն տոկոսադրույքների նկատմամբ Ընկերության ենթարկվածությունը որոշող ձևակերպված քաղաքականություն: Այնուամենայնիվ, նոր վարկերի կամ փոխառությունների դեպքում ղեկավարությունը հիմնվում է իր դատողությունների վրա որոշելու համար, թե, որ տոկոսադրույքը՝ հաստատուն թե փոփոխուն, ավելի բարենպաստ կլինի Ընկերության համար մինչև մարման ժամկետն ակնկալվող ժամանակաշրջանի ընթացքում:

Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկն առաջանում է Ընկերության գործող կապիտալի կառավարումից, ֆինանսական ծախսերից և պարտքային գործիքների հիմնական գումարների մարումներից:

Իրացվելիության ռիսկը կապված է Ընկերության՝ ֆինանսական պարտավորությունները սահմանված ժամկետներում մարելու հետ կապված ղժվարությունների հետ:

«Միջազգային Էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ
Ֆինանսական հաշվետվությունների կից ծանոթագրություններ
2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)

Համաձայն Ընկերության բաղաբաղանդության՝ Ընկերությունը պետք է ունենա պարտավորությունների մարման համար բավարար դրամական միջոցներ: Այս առումով այն ձգտում է պահպանել բավարար դրամական միջոցներ, որպեսզի կարողանա մարել սահմանված պարտավորությունները: Դրամական միջոցների բավարարությունը նաև ապահովվում է վարկային պայմանագրերից բխող չօգտագործված վարկային միջոցների օգտագործման հաշվին (Ծանոթագրություն 20):

Ստորև ներկայացված են Ընկերության ֆինանսական պարտավորությունների (չզեղչված պայմանագրային դրամական միջոցների հոսքեր) մարման պայմանագրային ժամկետները:

	Ցպահանջ և մինչև 2 ամիս	2-12 ամիս	1-2 տարի	2-5 տարի	5 տարի և ավելի	Ընդամենը չզեղչված պարտավորու- թյուններ հազ. դրամ	Հաշվեկշռա- յին արժեք հազ. դրամ
	հազ. դրամ	հազ. դրամ	հազ. դրամ	հազ. դրամ	հազ. դրամ	հազ. դրամ	հազ. դրամ
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ							
Բաժնետոմսերով և ակտիվներով ապահովված վարկ EADB	347,970	1,710,513	4,244,424	8,785,542	3,104,472	18,192,921	12,953,627
Գրավով չապահովված բանկային վարկեր	-	294,120	582,206	1,422,254	1,414,368	3,712,948	1,560,682
Առևտրային կրեդիտորական պարտքեր	1,119,252	-	-	-	-	1,119,252	1,119,252
	1,467,222	2,004,633	4,826,630	10,207,796	4,518,840	23,025,121	15,633,561
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ							
Բաժնետոմսերով և ակտիվներով ապահովված վարկ EADB	625,093	1,900,772	4,512,840	9,077,198	4,199,074	20,314,977	14,771,335
Գրավով չապահովված բանկային վարկեր	-	262,628	-	-	3,419,968	3,682,596	1,476,828
Առևտրային կրեդիտորական պարտքեր	2,867,737	-	-	-	-	2,867,737	2,867,737
	3,492,830	2,163,400	4,512,840	9,077,198	7,619,042	26,865,310	19,115,900

Կապիտալի կառավարում

Ընկերությունը իր կապիտալը կառավարում է՝ ապահովելու համար Ընկերության շարունակական գործունեությունը:

Ընկերության կապիտալի կառուցվածքը ներառում է փոխառու միջոցները (ընթացիկ և ոչ ընթացիկ պարտավորություններ) և սեփական կապիտալը (ներառող կանոնադրական կապիտալը, վերգնահատման պահուստը, կապիտալի բաշխումը և կուտակված վնասը):

Ընկերության՝ որպես կապիտալ կառավարվող գումարները հաշվետու տարվա համար ամփոփված են ստորև.

	31. 12. 2025թ. հազ. Դրամ	31. 12. 2024թ. հազ. դրամ
Փոխառություններ	14,514,310	16,248,178
Հանած դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	(85,437)	(37,917)
Հանած կարճաժամկետ բանկային ավանդներ	(2,450,762)	(1,234,384)
	11,978,111	14,975,877
Սեփական կապիտալ	18,145,196	16,004,703
Փոխառություններ/Կապիտալ հարաբերակցություն	0.7	0.9

«Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ
Ֆինանսական հաշվետվությունների կից ծանոթագրություններ
2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)

5. Հասույթ

ա) Հասույթի ուղղություններ

Ընկերությունը հասույթը ստանում է հիմնականում էլեկտրաէներգիայի վաճառքից:

	2025թ.	2024թ.
	հազ. դրամ	հազ. դրամ
Հասույթ հաճադորդների հետ պայմանագրերից	9,973,381	10,056,681
Փոխանցման ծառայություններ	152,078	181,034
	<u>10,125,459</u>	<u>10,237,715</u>

բ) Հաճախորդների պայմանագրերից հասույթի մանրամասնեցում

Ստորև բերվող աղյուսակում հաճախորդների հետ պայմանագրերից հասույթը ներկայացված է ըստ ծառայությունների հիմնական տեսակների և հասույթի ճանաչման ժամկետների:

Հասույթի ճանաչման ժամկետները

Ժամանակի ընթացքում փոխանցված ապրանքներ և ծառայություններ

	10,125,459	10,237,715
Հասույթ հաճախորդների հետ պայմանագրերից	<u>10,125,459</u>	<u>10,237,715</u>

Ընկերության սակագները հաշվարկվում և սահմանվում են «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքում ամրագրված սկզբունքների, ՀՀ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (ՀԾԿՀ) որոշումներով հաստատված սակագների հաշվարկման մեթոդիկայի հիման վրա: Սակագները սովորաբար վերանայվում են յուրաքանչյուր տարին մեկ անգամ:

Ընկերության համար սահմանված արտադրված էլեկտրաէներգիայի սակագները 1կՎտժ-ի համար (առանց ԱԱՀ) ներկայացված են ստորև՝

<u>Մեկնարկի ամսաթիվ</u>	<u>Էլեկտրաէներգիա</u>
12/24/2023	21.141
12/30/2024	20.758
12/30/2025	19.569

գ) Կատարման պարտականություններ և հասույթի ճանաչման քաղաքականությունը

Հասույթը չափվում է հաճախորդի հետ պայմանագրում սահմանված հատուցման հիման վրա: Ընկերությունը ճանաչում է հասույթը, երբ հաճախորդին է փոխանցում ապրանքի կամ ծառայության նկատմամբ հսկողությունը:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է տեղեկատվություն հաճախորդների հետ պայմանագրերի կատարման պարտականությունների բնույթի և կատարման ժամկետների, այդ թվում՝ վճարման նշանակալի պայմանների և հասույթի ճանաչման համապատասխան քաղաքականության վերաբերյալ:

«Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ
Ֆինանսական հաշվետվությունների կից ծանոթագրություններ
2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)

Կատարման պարտականությունների բնույթը և կատարման ժամկետները ներառյալ՝ վճարման նշանակալի պայմանները		Հասույթի ճանաչման քաղաքականությունը
Ծառայության տեսակը		
Էլեկտրաէներգիայի վաճառք	Էլեկտրաէներգիայի վաճառքից ստացվող հասույթը ճանաչվում է հաճախորդին էլեկտրաէներգիա վաճառելուց հետո: Վաճառքի պայմանագիրը գործում է մինչև վաճառողի լիցենզիայի գործողության ժամկետի լրանալը, այնուամենայնիվ, սակագները և ծավալները սահմանվում են տարեկան կտրվածքով: Հաշիվները ներկայացվում են ամսական կտրվածքով և սովորաբար ենթակա են վճարման 25 օրվա ընթացքում:	Որպես գործնական բնույթի պարզեցում՝ Ընկերությունը հասույթը ճանաչում է այն գումարով, որի չափով իրավունք ունի հաշիվ ներկայացնել, եթե այդ գումարն ուղղակիորեն համընկնում է մինչև տվյալ ամսաթիվն Ընկերության կողմից պարտականության կատարման արդյունքում հաճախորդին փոխանցված արժեքի հետ:
Էլեկտրաէներգիայի փոխանցման ծառայություններ	Այս պայմանագրի համաձայն՝ Ընկերությունը փոխանցում է Էլեկտրաէներգիան իր հաճախորդի սպառողներին և/կամ իր հաճախորդներին այլ ցանցային կայաններին: Հաշիվները դուրս են գրվում ամսական կտրվածքով և սովորաբար ենթակա են վճարման 30 օրվա ընթացքում:	Հաճախորդները միաժամանակ ստանում և սպառում են Էլեկտրաէներգիայի մատակարարման օգուտները՝ վերջինիս մատակարարմանը զուգընթաց, և Ընկերությունը ծառայության նկատմամբ հսկողությունը փոխանցում է ժամանակի ընթացքում, այդ իսկ պատճառով, իր կատարման պարտականությունները կատարում է և հասույթը ճանաչում է ժամանակի ընթացքում: Փոփոխական արժեքը, որն իրենից ներկայացնում է սպառված Էլեկտրաէներգիայի քանակության և գործող սակագների արտադրյալը, որոշվում է յուրաքանչյուր օրացուցային ամսվա վերջում վերցրած հաշվիչների ցուցմունքների հիման վրա:

6. Վաճառքի ինքնարժեք

	2025թ. հազ. դրամ	2024թ. հազ. դրամ
Մաշվածություն	2,092,459	2,093,254
Ձեռք բերված էլեկտրաէներգիա	1,805,648	2,508,729
Աշխատավարձ	882,338	893,151
Վերանորոգման և սպասարկման ծախսեր	849,598	935,363
Նյութեր	133,535	235,333
Էլեկտրաէներգիա	25,368	27,963
Վարձակալություն	5,432	4,151
Այլ ծախսեր	825	670
	5,795,203	6,698,614

«Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ
Ֆինանսական հաշվետվությունների կից ծանոթագրություններ
2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)

7. Վարչական ծախսեր

	2025թ.	2024թ.
	հազ. դրամ	հազ. դրամ
Աշխատավարձ	436,679	422,873
Մասնագիտական ծառայություններ	195,396	98,700
Անվտանգություն	172,320	172,320
Հարկեր(բացառությամբ շահութահարկի)	146,755	127,392
Բանկային, ապահովագրության ծախսեր	108,274	120,680
Մաշվածություն և ամորտիզացիա	45,444	46,420
Գրասենյակային և կոմունալ ծախսեր	18,888	19,439
Վերանորոգում և սպասարկում	14,430	21,950
Գործուղման և ներկայացուցչական ծախսեր	4,629	6,389
Հեռահաղորդակցություն	2,957	3,220
Այլ ծախսեր	39,856	54,008
	1,185,628	1,093,391

8. Այլ ծախսեր

	2025թ.	2024թ.
	հազ. դրամ	հազ. դրամ
Սոցիալական ծախսեր	14,044	12,211
Հիմնական միջոցների դուրսգրում	3,042	24,707
Տույժեր և տուգանքներ	128	1,043
Այլ ծախսեր	4,863	4,834
	22,077	42,795

9. Այլ եկամուտ

	2025թ.	2024թ.
	հազ. դրամ	հազ. դրամ
Գույքագրումից առաջացած եկամուտներ	-	74,937
Պաշարների վաճառքից եկամուտներ	-	44,687
Այլ եկամուտներ	10,049	10,832
	10,049	130,456

10. Ֆինանսական եկամուտ և ֆինանսական ծախսեր

	2025թ.	2024թ.
	հազ.դրամ	հազ.դրամ
Տոկոսային եկամուտ բանկային ավանդներից	129,400	78,041
Փոխառությունից հաշվառված տոկոս	53,512	18,504
Չուտ օգուտ/(վնաս) փոխարժեքային տարբերություններից	446,440	710,658
Ընդամենը ֆինանսական եկամուտ	629,352	807,203
Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական պարտավորություններ-տոկոսային ծախսեր	(1,166,765)	(1,493,655)
Ընդամենը ֆինանսական ծախսեր	(1,166,765)	(1,493,655)
	(537,413)	(686,452)

«Միջազգային Էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ
Ֆինանսական հաշվետվությունների կից ծանոթագրություններ
2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)

11. Շահութահարկի գծով ծախս

Շահույթում կամ վնասում ճանաչված գումարներ

Շահութահարկի գծով ծախսի հիմնական բաղադրիչներն են՝

	2025թ. հազ. դրամ	2024թ. հազ. դրամ
Շահութահարկի գծով ծախս	-	-
Ժամանակավոր տարբերությունների գծով հարկային ծախս	(456,016)	(165,024)
Ընդամենը շահութահարկի գծով հարկային ծախս	(456,016)	(165,024)

Հայաստանի Հանրապետությունում շահութահարկի դրույթաչափը 18% է (2024թ.՝ 18%):

Շահութահարկի արդյունավետ դրույթաչափը տարբերվում է շահութահարկի՝ օրենքով սահմանված դրույթաչափից: Օրենքով սահմանված դրույթաչափի հիման վրա շահութահարկի գծով ծախսի համաձայնեցումը իրականի հետ հետևյալն է.

	2025թ.		2024թ.	
	հազ. դրամ	Արդյունավետ հարկային դրույթաչափ %	հազ. դրամ	Արդյունավետ հարկային դրույթաչափ %
Շահույթ/(վնաս) նախքան շահութահարկով հարկումը	2,596,509		1,831,537	
Շահութահարկ՝ հաշվարկված հարկի կիրառելի դրույթաչափով	(467,372)	(18.0)%	(329,677)	(18.0)%
Արտարժույթի տարբերություններից չհարկվող եկամուտ/(չնվազեցվող ծախս)	80,359	3%	127,918	6.98%
Չնվազեցվող ծախսեր	(69,003)	(3)%	36,735	2.01%
Շահութահարկի գծով եկամուտ/(Ծախս)	(456,016)	(18.0)%	(165,024)	(9.01)%

ճանաչված հետաձգված հարկային ակտիվներ և պարտավորություններ

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները վերագրելի են հետևյալ հոդվածներին՝

	Ակտիվներ		Պարտավորություններ		Զուտ	
	2025թ.	2024թ.	2025թ.	2024թ.	2025թ.	2024թ.
Հիմնական միջոցներ	-	-	(653,773)	(227,366)	(653,773)	(227,366)
Ոչ նյութական ակտիվներ	252	251	-	-	252	251
Պաշարներ	11,378	10,209	-	-	11,378	10,209
Տրամադրված փոխառություններ	10,438	11,112	-	-	10,438	11,112
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	4,686	4,729	-	-	4,686	4,729
Վարկեր և փոխառություններ	-	-	(399,097)	(409,840)	(399,097)	(409,840)
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	171,518	176,102	-	-	171,518	176,102
Հարկային վնաս	584,726	620,947	-	-	584,726	620,947
	782,998	823,350	(1,052,870)	(637,206)	(269,872)	186,144

«Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ
Ֆինանսական հաշվետվությունների կից ծանոթագրություններ
2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)

Ժամանակավոր տարբերությունների շարժը տարվա ընթացքում

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները դեկտեմբերի 31-ի դրությամբ և դրանց շարժը համապատասխան տարիների համար ներկայացված է ստորև.

	2025թ. հունվարի 1-ի դրությամբ	(Հաշվեգրված)/ նվազեցված շահույթի կամ վնասի հաշվին	Այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
	հազ. դրամ	հազ. դրամ	հազ. դրամ	հազ. դրամ
Հիմնական միջոցներ	(227,366)	(426,408)	-	(653,774)
Ոչ նյութական ակտիվներ	250	2	-	252
Պաշարներ	10,209	1,169	-	11,378
Տրամադրված փոխառություններ	11,112	(674)	-	10,438
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	4,729	(43)	-	4,686
Վարկեր և փոխառություններ	(409,840)	10,743	-	(399,097)
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	176,102	(4,584)	-	171,518
Հարկային վնաս	620,948	(36,221)	-	584,727
	186,144	(456,016)	-	(269,872)

	2024թ. հունվարի 1-ի դրությամբ	(Հաշվեգրված)/ նվազեցված շահույթի կամ վնասի հաշվին	Այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
	հազ. դրամ	հազ. դրամ	հազ. դրամ	հազ. դրամ
Հիմնական միջոցներ	91,677	(319,043)	-	(227,366)
Ոչ նյութական ակտիվներ	231	19	-	250
Պաշարներ	6,924	3,285	-	10,209
Տրամադրված փոխառություններ	4,293	(3,619)	10,438	11,112
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	4,700	29	-	4,729
Վարկեր և փոխառություններ	(473,669)	63,829	-	(409,840)
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	177,384	(1,282)	-	176,102
Հարկային վնաս	529,189	91,758	-	620,948
	340,730	(165,024)	10,438	186,144

«Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ
Ֆինանսական հաշվետվությունների կից ծանոթագրություններ
2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)

12. Հիմնական միջոցներ

	Հող և շենքեր	Սարքավորում ներ	Տրանսպորտայ ին միջոցներ	Հարմարանք և կցամասեր	Կառուցման ընթացքում գտնվող	Ընդամենը
Հազ. դրամ						
<i>Սկզբնական արժեք</i>						
1 հունվարի 2024թ.	17,704,786	12,022,879	215,898	58,190	415	30,002,168
Ավելացումներ	-	30,365	-	31,717	1,020,928	1,083,010
Օտարումներ/դուրսգրումներ	(24,015)	(1,103)	(3,748)	-	-	(28,866)
Ներքին շարժեր	74,937	707,313	-	-	(782,250)	-
31 դեկտեմբերի 2024թ.	17,755,708	12,759,454	212,150	89,907	239,093	31,056,312
Ավելացումներ	-	4,697	-	5,565	507,524	517,786
Օտարումներ/դուրսգրումներ	-	(3,293)	-	-	-	(3,293)
Ներքին շարժեր	-	489,629	-	10,142	(499,771)	-
31 դեկտեմբերի 2025թ.	17,755,708	13,250,487	212,150	105,614	246,846	31,570,805
<i>Մաշվածություն</i>						
1 հունվարի 2024թ.	-	-	-	-	-	-
Տարվա հաշվարկ	(656,148)	(1,412,294)	(54,120)	(16,629)	-	(2,139,191)
Օտարումներ/դուրսգրումներ	160	252	1,189	-	-	1,601
31 դեկտեմբերի 2024թ.	(655,988)	(1,412,042)	(52,931)	(16,629)	-	(2,137,590)
Տարվա հաշվարկ	(633,511)	(1,429,109)	(52,092)	(22,712)	-	(2,137,424)
Օտարումներ	-	252	-	-	-	252
31 դեկտեմբերի 2025թ.	(1,289,499)	(2,840,899)	(105,023)	(39,341)	-	(4,274,762)
Զուտ հաշվեկշռ. արժեք					-	
1 հունվարի 2024թ.	17,704,786	12,022,879	215,898	58,190	415	30,002,168
31 դեկտեմբերի 2024թ.	17,099,720	11,347,412	159,219	73,278	239,093	28,918,722
31 դեկտեմբերի 2025թ.	16,466,209	10,409,588	107,127	66,273	246,846	27,296,043

«Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ
Ֆինանսական հաշվետվությունների կից ծանոթագրություններ
2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ամբողջությամբ մաշված հիմնական միջոցների արժեքը կազմել է 114,075 հազար դրամ (2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 105,282 հազար ՀՀ դրամ):

Մաշվածության գծով ծախսն ըստ ֆինանսական հաշվետվությունների հոդվածների բաշխվել է հետևյալ կերպ.

	2025թ. հազ. դրամ	2024թ. հազ. դրամ
Վաճառքի ինքնարժեք	2,092,459	2,093,254
Վարչական ծախսեր	44,581	45,937
Այլ գործառնական ծախսեր	384	-
	2,137,424	2,139,191

Հաշվեկշռային արժեքը, եթե վերագնահատումը չիրականացվեր

<i>հազ. դրամ</i>	<i>Հող և շենքեր</i>	<i>Սարքավորումներ</i>	<i>Տրանսպորտային միջոցներ</i>	<i>Հարմարանք և կցամասեր</i>	<i>Կառուցման ընթացքում գտնվող</i>	<i>Ընդամենը</i>
1 հունվարի 2024թ.	1,237,427	15,044,578	88,433	22,979	415	16,393,832
31 դեկտեմբերի 2024թ.	1,272,811	15,478,698	75,842	49,159	239,093	17,115,603
31 դեկտեմբերի 2025թ.	1,259,341	15,656,477	68,258	53,798	246,846	17,284,720

2025թ. կապիտալացված փոխառության ծախսումների գումարը կազմել է 208,677 հազար դրամ (2024թ. կազմել է 8,897 հազար դրամ), որն առաջացել է վարկերի նկատմամբ կիրառված փոխառության ծախսումներից (ծանոթագրություն 20):

2025 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության 11,726,944 հազար դրամ հաշվեկշռային արժեքով հիմնական միջոցները գրավադրված են որպես վարկերի ապահովման միջոց (2024թ. առկա չեն):

Ղեկավարությունը հանձնարարել էր «ԲԻ-ԴԻ-Օ Ըղվայգորի» ՓԲԸ-ին իրականացնել հիմնական միջոցների անկախ գնահատում 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ: Հիմնական միջոցների արժեքը գնահատվել էր զեղչված դրամական հոսքերի մեթոդով և կազմել էր 30,002,168 հազար ՀՀ դրամ, որը դասվել է իրական արժեքի հիերարխիայի 3-րդ մակարդակին՝ հիմք ընդունելով գնահատման մեթոդով օգտագործված ելակետային տվյալները (տես Ծանոթագրություն 3): Հիմնական միջոցների արժեքը վերագնահատումից նվազել է 5,946,654 հազար ՀՀ դրամով, 8,519,911 հազար ՀՀ դրամ ճանաչվել է շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում որպես ծախս և 2,572,933 հազար ՀՀ դրամ՝ այլ համապարփակ եկամուտ:

Ընկերության հիմնական միջոցների մեծամասնությունը մասնագիտացված բնույթ ունի և հազվադեպ է վաճառվում բաց շուկայում, բացառությամբ այն դեպքերի, երբ դա չի հանդիսանում բիզնեսի շարունակելիության մաս: Բացառությամբ փոխադրամիջոցների և որոշ հողատարածքների և շենքերի, որոնք վերագնահատվել են վերջերս շուկայում տեղի ունեցած գործառնությունների տվյալների կամ դիտելի շուկայական ելակետային տվյալների (օրինակ՝ համադրելի ապրանքների շուկայական գները) հիման վրա, նմանատիպ հիմնական միջոցների շուկան ակտիվ չէ Հայաստանի Հանրապետությունում և չի ապահովում համադրելի հիմնական միջոցների վաճառքների բավարար ծավալ՝ իրական արժեքը գնահատելիս շուկայական մոտեցումն օգտագործելու համար:

Հետևաբար, հիմնական միջոցների իրական արժեքը որոշվել էր օգտագործելով զեղչված դրամական հոսքերի մոտեցումը: Այս մեթոդը հաշվի է առնում Ընկերության ազատ դրամական հոսքերը ձեռնարկության արժեքը գնահատելու և պահանջվող ճշգրտումները կատարելու համար (այսինքն՝ զուտ շրջանառու կապիտալի և այլ գործառնական երկարաժամկետ ակտիվների հաշվեկշռային արժեքը), որպեսզի դուրս բերվի հիմնական միջոցների արժեքը:

«Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ
Ֆինանսական հաշվետվությունների կից ծանոթագրություններ
2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)

Դրամական հոսքերի ստուգման ընթացքում կիրառվել են հետևյալ հիմնական ենթադրությունները.

- Դրամական միջոցների հոսքերի կանխատեսումները իրականացվել է խելամիտ և օժանդակող ենթադրությունների հիման վրա, որոնք ներկայացնում են լավագույն գնահատականը այն տնտեսական պայմանների վերաբերյալ, որոնք գոյություն կունենան ակտիվի մնացորդային օգտակար ծառայության ընթացքում;
- Դրամական միջոցների հոսքերի կանխատեսումները իրականացվել է Ընկերության կողմից հաստատված ամենավերջին ֆինանսական բյուջեների/կանխատեսական գնահատումների հիման վրա, սակայն չեն ներառել ապագա վերակառուցումից կամ ակտիվի արդյունավետության բարելավումից կամ կատարելագործումից առաջացող դրամական միջոցների գնահատված ապագա ներհոսքեր կամ արտահոսքեր,
- Հասույթը և ծախսերը ճշգրտվել են գնաճի համապատասխան դրույքների մասով:
- Կիրառվել է 12.12% զեղչման դրույք: Չեղչման դրույքը որոշվել է հիմք ընդունելով տվյալ ոլորտի համար կապիտալի միջին կշռված արժեքի միջինը:

Մնացորդային լիկվիդացման արժեքը հաշվարկելիս կիրառվել են հետևյալ հիմնական ենթադրությունները. Մնացորդային արժեքը այն գնահատված գումարն է, որը կազմակերպությունը ներկայումս ձեռք կբերեր ակտիվի օտարումից՝ օտարման գնահատված ծախսումները հանելուց հետո, եթե ակտիվն արդեն հասուն լիներ և իր օգտակար ծառայության վերջում ակնկալվող վիճակում:

13. Կանխավճարներ ոչ ընթացիկ ակտիվների ձեռքբերման համար

Ընկերության 2024-2023 թվականների ներդրումային ծրագրի ամենախոշոր ենթաբաղադրիչը Արգելի ՀԷԿ-ի թիվ 1 և թիվ 4 հիդրոէլեկտրակայանների փոխարինումն է, որոնց ընդհանուր արժեքը կազմում է շուրջ 25,200,000 հազար ՀՀ դրամ (առանց ԱԱՀ): Փոխարինման աշխատանքները մեկնարկել են 2024 թվականին և նախատեսվում է ավարտել համապատասխանաբար 2027 և 2028 թվականներին: Այդ աշխատանքների իրականացման համար 2025 թվականին, համաձայն կապալի պայմանագրի, տրամադրվել է 20,400 հազար ՀՀ դրամ կանխավճար (2024 թվականին՝ 2,568,266 հազար ՀՀ դրամ):

14. Պաշարներ

	31.12.2025թ. հազ. դրամ	31.12.2024թ. հազ. դրամ
Պահեստամասեր	291,073	304,520
Նյութեր	72,049	86,424
Այլ	99,440	105,348
Արժեզրկման պահուստ	(54,208)	(55,290)
	408,354	441,002

15. Կապակցված կողմերին տրամադրված փոխառություններ

	31.12.2025թ. հազ. դրամ	31.12.2024թ. հազ. դրամ
Ընթացիկ		
Տրամադրված փոխառություններ	693,010	689,265
Ընդամենը տրամադրված փոխառություններ	693,010	689,265

«Միջազգային Էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ
Ֆինանսական հաշվետվությունների կից ծանոթագրություններ
2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)

Ստորև ներկայացված են տրամադրված փոխառությունների պայմանները:

հազ. դրամ	Արժույթ	Անվանական տոկոսադրույք	Մարման ժամկետ	2025թ.		2024թ.	
				Անվանական Արժեք	Հաշվեկշ. Արժեք	Անվանական Արժեք	Հաշվեկշ. Արժեք
Գրավով չապահովված փոխառություններ	ՀՀ դրամ	0%	2026	751,000	693,010	751,000	689,265

Տրամադրված փոխառությունները զեղչվել են 8.37% տարեկան արդյունավետ տոկոսադրույքով:

16. Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

	31.12.2025թ. հազ. դրամ	31.12.2024թ. հազ. դրամ
Առևտրային դեբիտորական պարտքեր Արժեզրկման պահուստ	469,208 (10,231) 458,977	640,895 (10,470) 630,425
Տրված կանխավճարներ Այլ հարկերի գծով դեբիտորական պարտքեր	16,065 87,737	105,584 292,714
Ընդամենը առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	562,779	1,028,723

17. Բանկային ավանդներ

Բանկային ավանդների մանրամասները ներկայացված է ստորև.

Ֆինանսական հաստատություն	Արժույթ	Տոկոսադրույք	Մարման ժամկետ	Մնացորդը 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	Մնացորդը 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Բանկ 1	ՀՀԴ	8.60%	27/04/2026	609,896	-
Բանկ 1	ՀՀԴ	7.60%	27/01/2026	608,745	-
Բանկ 1	ՀՀԴ	6.50%	22/01/2026	1,101,959	-
Բանկ 1	ՀՀԴ	6.50%	26/01/2026	130,162	-
Բանկ 1	ՀՀԴ	6.75%	07/01/2025	-	402,508
Բանկ 1	ՀՀԴ	5.75%	07/01/2025	-	231,229
Բանկ 1	ՀՀԴ	5.75%	27/01/2025	-	100,094
Բանկ 1	ՀՀԴ	6.75%	27/01/2025	-	500,553
Ընդամենը				2,450,762	1,234,384

Տոկոսների մարումը տեղի է ունենում ժամկետի վերջում:

«Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ
Ֆինանսական հաշվետվությունների կից ծանոթագրություններ
2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)

18. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

	31.12.2025թ. հազ. դրամ	31.12.2024թ. հազ. դրամ
Բանկային հաշիվներ դրամով	85,007	37,671
Բանկային հաշիվներ արտարժույթով	430	246
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	85,437	37,917

2025 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության բանկային հաշիվները ամբողջությամբ գրավադրված են որպես ներգրավված վարկերի ապահովման միջոց (2024թ. նույնպես):

19. Սեփական կապիտալ

Կանոնադրական կապիտալ

Կանոնադրական կապիտալն իրենից ներկայացնում է Ընկերության հիմնադիր փաստաթղթերում նշված կապիտալի անվանական գումարը:

Կանոնադրական կապիտալի սեփականատերերն իրավունք ունեն ժամանակ առ ժամանակ ստանալ հայտարարված շահաբաժինները: Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն՝ Ընկերության բաշխման ենթակա պահուստները սահմանափակվում են Ընկերության Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառումը կարգավորող իրավական ակտերին համապատասխան պատրաստված ֆինանսական հաշվետվություններում գրանցված չբաշխված շահույթի մնացորդով:

Հաստատված և ամբողջությամբ վճարված կապիտալը 2025 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմում է 4,560,650 հազար ՀՀ դրամ, որը կազմված է 1000 դրամ անվանական արժեքով սովորական բաժնետոմսերից (2024 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ 4,560,650 հազար ՀՀ դրամ):

Ընկերության 100% բաժնետոմսերը գրավադրված են որպես ներգրավված վարկերի ապահովման միջոց:

Վերազնահատումից օգուտ

Վերազնահատումից օգուտը վերաբերվում է հիմնական միջոցների վերազնահատմանը:

Կապիտալի կառավարում

Ընկերությունը չունի կապիտալի կառավարման ձևակերպված քաղաքականություն, սակայն դեկլարությունը ձգտում է ապահովել կապիտալի բավարար բազա իր գործառնական և ռազմավարական պահանջները բավարարելու համար: Դա իրագործվում է դրամական միջոցների արդյունավետ կառավարման, Ընկերության հասույթի և շահույթի շարունակական վերահսկման ու հիմնականում Ընկերության գործառնական գործունեության դրամական հոսքերով ֆինանսավորվող երկարաժամկետ ներդրումային ծրագրերի միջոցով: Ձեռնարկելով այդ քայլերը՝ Ընկերությունը նպատակ ունի կայունացնել շահույթի աճը:

Տարվա ընթացքում կապիտալի կառավարման նկատմամբ կիրառվող Ընկերության մոտեցումը չի փոփոխվել: Ընկերության կապիտալի նկատմամբ կիրառելի չեն արտաքին մարմինների կողմից սահմանված պահանջները:

Կապիտալի բաշխում

66,056 հազար ՀՀ դրամ գումարով կապիտալի բաշխումն առաջացել է 2023-24թթ-ին մայր Ընկերությանը փոխառություններ տրամադրելու արդյունքում:

«Միջազգային Էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ
Ֆինանսական հաշվետվությունների կից ծանոթագրություններ
2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)

20. Վարկեր և փոխառություններ

Այս ծանոթագրությունում ներկայացված է տեղեկատվություն Ընկերության ամորտիզացված արժեքով չափվող տոկոսակիր վարկերի և փոխառությունների պայմանագրային պայմանների մասին: Տոկոսադրույքի, արտարժույթի և իրացվելիության ռիսկերին Ընկերության ենթարկվածության վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվությունը ներկայացված է Ծանոթագրություն 4-ում՝ «Ֆինանսական գործիքներ - ռիսկերի կառավարում»:

Ընկերության ակտիվները (ծանոթագրություն 12) և 100% բաժնետոմսերը (ծանոթագրություն 19) գրավադրված են որպես Եվրասիական բանկից ստացված վարկերի ապահովման միջոց:

	31.12.2025թ. հազ. դրամ	31.12.2024թ. հազ. դրամ
Ոչ ընթացիկ պարտավորություններ		
Բաժնետոմսերով և ակտիվներով ապահովված վարկ EADB	11,499,847	13,253,741
Գրավով չապահովված վարկ ՀՀ կառավարությունից	1,251,466	1,189,849
	12,751,313	14,443,590
Ընթացիկ պարտավորություններ		
Բաժնետոմսերով և ակտիվներով ապահովված վարկ EADB	1,453,780	1,517,609
Գրավով չապահովված վարկ ՀՀ կառավարությունից	309,217	286,979
	1,762,997	1,804,588
	14,514,310	16,248,178

Հազար դրամ	Արժույթ	Մարման վերջնա ժամկետ	Անվան ական տոկոս ադր.	Արդյուն ավետ տոկոս ադրույք	31 դեկտեմբերի 2025թ.		31 դեկտեմբերի 2024թ.	
					Անվանա կ.արժեք	Հաշվեկշ ռ.արժեք	Անվանա կ.արժեք	Հաշվեկշ ռ.արժեք
Բաժնետոմսերով և ակտիվներով ապահովված վարկ EADB Գրավով չապահովված վարկ ՀՀ կառավար ությունից	ԱՄՆ դոլար	2037	SOFR+4 ,7%	SOFR+4, 7%	13,018,562	12,953,627	14,842,468	14,771,350
	Եվրո (ՀՀԴ)	2041	0.75%	8.63%	3,712,948	1,560,683	3,682,596	1,476,828
					16,731,510	14,514,310	18,525,064	16,248,178

Ստորև ներկայացված են վարկերի և փոխառությունների պայմանները.

«Միջազգային Էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ
Ֆինանսական հաշվետվությունների կից ծանոթագրություններ
2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)

Պարտավորությունների փոփոխությունների առաջացող դրամական հոսքերի համադրում և ֆինանսավորման գործունեությունից

	31.12.2025թ. հազ. դրամ	31.12.2024թ. հազ. դրամ
Տարեսկզբի մնացորդ	16,248,178	15,352,485
Փոփոխություններ ֆինանսավորման գործունեությունից առաջացած դրամական հոսքերի հետ կապված		
Մուտքեր վարկերից և փոխառություններից	-	14,815,332
Վարկերի և փոխառությունների մարում	(1,549,176)	(13,626,789)
Ընդամենը փոփոխություն ֆինանսավորման գործունեությունից առաջացող դրամական հոսքերի հետ կապված	(1,549,176)	1,188,543
Արտարժույթի փոխարժեքի փոփոխության հետևանքներ	(415,057)	(735,957)
Այլ փոփոխություններ		
Տոկոսային ծախս	1,325,675	1,474,797
Վճարված տոկոսներ	(1,095,310)	(1,031,690)
Ընդամենը պարտավորության այլ փոփոխություններ	230,365	443,107
Տարեվերջի մնացորդ	14,514,310	16,248,178

2023թվականի դեկտեմբերի 20-ին «Միջազգային Էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) և Եվրասիական Չարգացման Բանկի (այսուհետ՝ Բանկ) միջև կնքվել է վարկային պայմանագիր:

Պայմանագրի շրջանակներում Բանկի կողմից Ընկերությանը տրամադրվել է վարկային գիծ 76մլն ԱՄՆ դոլարի չափով հետևյալ նպատակների համար՝

- Ընկերության HSBC Bank plc-ից ստացած վարկերի վերաֆինանսավորում՝ առավելագույնը 33 մլն ԱՄՆ դոլարի չափով,
- Ընկերության 2024-2033 թվականների ներդրումային ծրագրի ֆինանսավորում՝ առավելագույնը 43 մլն ԱՄՆ դոլարի չափով:

2024 թվականի հունիսի 24-ին Ընկերությունը HSBC Bank Հայաստանին պաշտոնական ծանուցում է ուղարկել 2024 թվականի հունիսի 4-ին վարկերի վաղաժամ մարման վերաբերյալ:

Միաժամանակ, 2024 թվականի հունիսի 25-ին Ընկերությունը plc-ից ստացած վարկերի մարման նպատակով վերոնշյալ վարկային պայմանագրի շրջանակներում Բանկին է ներկայացրել 1-ին տրանշի տրամադրման հայտը 32,403,903 ԱՄՆ դոլարի չափով:

2024թվականի հուլիսին Բանկի տրամադրած 1-ին տրանշի միջոցների հաշվին Ընկերությունը վաղաժամ մարել է HSBC Bank plc-ից ստացած վարկերը ամբողջությամբ:

21. Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

	31.12.2025թ. հազ. դրամ	31.12.2024թ. հազ. դրամ
Առևտրային կրեդիտորական պարտք	624,498	641,884
Հիմնական միջոցների ձեռքբերումներ	494,754	2,225,853
Ֆինանսական գործիք պարտավորություն ճանաչված	1,119,252	2,867,737
Կրեդիտորական պարտքեր աշխատավարձի գծով	132,631	125,374
Հարկերի գծով կրեդիտորական պարտքեր	71,309	55,992
Այլ կրեդիտորական պարտքեր	234	1,133
	1,323,426	3,050,236

«Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ
Ֆինանսական հաշվետվությունների կից ծանոթագրություններ
2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)

Ընկերության ենթարկվածությունը պարտքային և արտարժույթի ռիսկերին ներկայացված են Ծանոթագրություն 4-ում՝ «Ֆինանսական գործիքներ - ռիսկերի կառավարում»:

22. Կապակցված կողմերի միջև գործարքներ

Ընկերության բաժնետոմսերի 100% սեփականատեր և վերջնական վերահսկող կողմ է հանդիսանում «Հրազդանի էներգետիկ կազմակերպություն» («ՀրազԶԷԿ») ԲԲԸ-ն: Ընկերության վերջնական մայր կազմակերպությունը «Տաշիր Կապիտալ» ՓԲԸ-ն է, վերջնական հսկող անձը՝ պրն. Սամվել Կարապետյանը:

Ընկերության վերջնական մայր կազմակերպությունը չի հրապարակում ֆինանսական հաշվետվություններ:

Գործարքներ կապակցված կողմերի հետ

Հազ. դրամ	Գործարքների գումարը դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար		Մնացորդը առ 31 դեկտեմբեր	
	2025	2024	2025	2024
Ապրանքների և ծառայությունների ձեռքբերում				
Համատեղ հսկողության ներքո գտնվող կազմակերպություններ և հիմնադիրն կապակցված անձիք	4,872	521,654	(861)	(132,464)
Հասույթ				
Համատեղ հսկողության ներքո գտնվող կազմակերպություններ և հիմնադիրն կապակցված անձինք	4,206,804	5,488,198	62,026	180,152
Հիմնադիր	-	1,408	1,689	1,691
Տրամադրված վարկեր և փոխառություններ				
Հիմնադիր	-	-	693,010	689,265

Բաժնետիրոջը տրված փոխառությունների վերաբերյալ տեղեկությունը ներկայացված է Ծանոթագրություն 15-ում:

Առանցքային կառավարչական անձնակազմին փոխհատուցումներ

	2025թ. հազ. դրամ	2024թ. հազ. դրամ
Աշխատավարձ և այլ հատուցումներ	176,525	171,278

23. Պայմանական պարտավորություններ

23. 1 Ապահովագրություն

Հայաստանի հանրապետությունում ապահովագրական ծառայությունների ոլորտը զարգացման փուլում է, և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են այլ երկրներում, Հայաստանում դեռևս չեն կիրառվում: Ընկերության հիմնական միջոցները ապահովագրված են ֆիզիկական վնասից և գողությունից մինչև 79,359,642 հազար ՀՀ դրամի չափով:

23. 2 Պայմանական պարտավորություններ դատական հայցերի գծով

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև մինչև այս ֆինանսական հաշվետվությունների հաստատման ամսաթիվը Ընկերությունը ներգրավված չէ այնպիսի դատական վարույթներում, որոնք կարող են էական ազդեցություն ունենալ Ընկերության ֆինանսական վիճակի վրա:

23. 3 Շրջակա միջավայրի հետ կապված խնդիրներ

Ընկերության գործունեությունը կարգավորվում է բազմաթիվ պետական օրենքներով կանոնակարգերով, որոնք կարգավորում են օդը և ջուրն աղտոտող նյութերի արտանետումը, թափոնների արտանետումը, գործածումը և պահպանումը: Ղեկավարությունը գտնում է, որ Ընկերությունը բավարարել է շրջակա միջավայրի պահպանության հետ կապված կառավարության պահանջները, այդ իսկ պատճառով Ընկերությունը պահուստ չի ձևավորել շրջակա միջավայրի պահպանության գծով հնարավոր պարտավորությունների համար, քանի որ ղեկավարությունը հնարավոր չի համարում նման պայմանական պարտավորությունների առաջացումը մոտ ապագայում: Այնուամենայնիվ, բնապահպանության հարցերը կարգավորող ՀՀ օրենսդրությունը զարգացման փուլում է և այդ օրենսդրության և վերջինիս մեկնաբանությունների հնարավոր փոփոխությունները կարող են էական փոփոխությունների հանգեցնել ապագայում:

23. 4 Հարկային ռիսկեր

Հայաստանի հարկային, փոխարժեքային և մաքսային համակարգերը բնորոշվում են օրենսդրության, պաշտոնական հայտարարությունների և դատավճիռների հաճախակի փոփոխություններով, որոնք հաճախ հստակ չեն, հակասական են և տարբեր կերպ են մեկնաբանվում տարբեր հարկային մարմինների կողմից: Հարկերը ենթակա են ստուգման և ուսումնասիրության հարկային մարմինների կողմից, որոնք իրավասու են կիրառել տույժեր և տուգանքներ: Հարկային օրենսդրության խախտման դեպքում հարկային մարմիններն իրավասու չեն սահմանել հարկերի գծով լրացուցիչ պարտավորություններ, տույժեր կամ տուգանքներ, եթե խախտման ամսաթվից անցել է երեք տարի:

Այս հանգամանքները Հայաստանում կարող են այլ երկրների համեմատությամբ ավելի մեծ և էական հարկային ռիսկ առաջացնել: Ղեկավարությունը գտնում է, որ պատշաճ կերպով է գնահատել հարկային պարտավորությունները՝ Հայաստանի գործող հարկային օրենսդրության իր մեկնաբանությունների, պաշտոնական հայտարարությունների և դատավճիռների հիման վրա: Այնուամենայնիվ համապատասխան իրավասու մարմինները կարող են ունենալ այլ մեկնաբանություններ, և հետևանքները կարող են լինել էական այս ֆինանսական հաշվետվությունների համար, եթե իրավասու մարմիններին հաջողվի գործադրել իրենց մեկնաբանությունները:

24. Հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող դեպքեր

Հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո մինչև սույն ֆինանսական հաշվետվությունների հաստատման ամսաթիվը բացահայտման ենթակա նշանակալի դեպքեր տեղի չեն ունեցել:

25. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթ

Ընկերության ֆունկցիոնալ արժույթը Հայաստանի Հանրապետության ազգային արժույթն է՝ դրամը: Այն հանդիսանում է նաև Ընկերության այս ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթը՝ հազարների ճշտությամբ:

Գործարքներ արտարժույթով

Արտարժույթով իրականացված գործարքները փոխարկվում են դրամի՝ գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Որպես փոխարժեք ընդունվում է Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի կողմից հրապարակված արժույթային շուկայում արտարժույթի նկատմամբ ՀՀ դրամի միջին փոխարժեքը:

Հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները վերագնահատվում են հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ որոշվող դրույթաչափերով: Չմարված դրամային ակտիվների և պարտավորությունների վերագնահատման արդյունքում առաջացող փոխարժեքային տարբերությունները անմիջապես ճանաչվում են շահույթում կամ վնասում:

«Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ
Ֆինանսական հաշվետվությունների կից ծանոթագրություններ
2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)

Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները ենթակա են վերագնահատման կանոնավոր հիմունքով: Վերագնահատման հաճախականությունը կախված է վերագնահատման ենթակա հիմնական միջոցների իրական արժեքների փոփոխություններից: Եթե հիմնական միջոցների հաշվեկշռային արժեքը վերագնահատման հետևանքով աճում է, աճը ճանաչվում է որպես այլ համապարփակ ֆինանսական արդյունք: Սակայն եթե այդ աճը վերականգնում է նույն հիմնական միջոցի շահույթում կամ վնասում ճանաչված նախկին վերագնահատումների արդյունքում առաջացած նվազումը, ապա այն ճանաչվում է շահույթում կամ վնասում: Եթե հիմնական միջոցի հաշվեկշռային արժեքը վերագնահատման հետևանքով նվազում է, նվազումը ճանաչվում է շահույթում կամ վնասում: Սակայն եթե այդ նվազումը վերականգնում է նույն հիմնական միջոցի ուղղակիորեն սեփական կապիտալում որպես այլ համապարփակ ֆինանսական արդյունք ճանաչված նախկին վերագնահատումների արդյունքում առաջացած աճը, ապա այն ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքի կազմում:

Հետագա ծախսումներ

Հիմնական միջոցների բաղկացուցչի փոխարինման ծախսերը ճանաչվում են միավորի հաշվեկշռային արժեքում, երբ հավանական է, որ Ընկերություն կհոսեն այդ միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները, և դրա արժեքը հնարավոր է արժանահավաստորեն չափել: Փոփոխվող բաղկացուցչի հաշվեկշռային արժեքն ապաճանաչվում է: Հիմնական միջոցների ամենօրյա սպասարկման ծախսումները ճանաչվում են շահույթում կամ վնասում առաջանալուն պես:

Մաշվածություն

Հիմնական միջոցների միավորների մաշվածության հաշվարկը սկսվում է դրանց տեղադրման և շահագործմանը պատրաստ լինելու պահից, իսկ սեփական ուժերով կառուցված ակտիվների դեպքում՝ վերջիններիս կառուցումն ավարտելու և շահագործմանը պատրաստ լինելու պահից: Մաշվածությունը հաշվարկվում է ակտիվի սկզբնական արժեքի հիման վրա՝ հանած դրա մնացորդային արժեքը:

Մաշվածությունը որպես կանոն ճանաչվում է շահույթում կամ վնասում գծային մեթոդով հիմնական միջոցների յուրաքանչյուր մասի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում, քանի որ այս մեթոդն առավել ճիշտ է արտացոլում ակտիվի հետ կապված ապագա տնտեսական օգուտների ստացման մոդելը: Հողատարածքի գծով մաշվածություն չի հաշվարկվում:

Ընկերության կողմից ճանաչված հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետը ներկայացված է ստորև.

Հիմնական միջոցներ

Օգտակար ծառայության ժամկետ

Շենքեր	10-50 տարի
Մեքենաներ և սարքավորումներ	10-50 տարի
Տրանսպորտային միջոցներ	3-12 տարի
Հարմարանք և կցամասեր	3-10 տարի
Այլ	1-5 տարի

Մաշվածության հաշվարկի մեթոդները, օգտակար ծառայության ժամկետները և մնացորդային արժեքները վերանայվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ և անհրաժեշտության դեպքում՝ ճշգրտվում:

Պաշարներ

Պաշարները հաշվառվում են ինքնարժեքի և հնարավոր իրացման զուտ արժեքի նվազագույնով:

Պաշարների ինքնարժեքը հաշվառվում է՝ օգտագործելով առաջին մուտք-առաջին ելք (ՄՄՄԵ) և ներառում է ձեռքբերման ծախսումները և պաշարները ներկա գտնվելու վայր և վիճակի բերելու հետ կապված այլ ծախսումներ:

Ֆինանսական գործիքներ

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները ճանաչվում են, երբ Ընկերությունը դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ:

«Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ
Ֆինանսական հաշվետվությունների կից ծանոթագրություններ
2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)

Ֆինանսական ակտիվի կամ պարտավորության սկզբնական չափումը տեղի է ունենում իրական արժեքով: Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների խմբում չդասակարգված ֆինանսական ակտիվների կամ պարտավորությունների դեպքում իրական արժեքին գումարվում (կամ հանվում) են գործարքի հետ կապված ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվի կամ պարտավորության ձեռքբերմանը կամ թողարկմանը: Գործարքի գծով ծախսերը, որոնք ուղղակիորեն վերագրելի են «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» ֆինանսական ակտիվների կամ ֆինանսական պարտավորությունների ձեռքբերմանը, անմիջապես ճանաչվում են շահույթում կամ վնասում:

Ֆինանսական ակտիվներ

Ֆինանսական ակտիվները դասակարգվում են հետևյալ կատեգորիաների՝

- ա) «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» ֆինանսական ակտիվներ (ԻԱՇԿԿ),
- բ) «իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող» ֆինանսական ակտիվներ (ԻԱԱՅՖԱ),
- գ) ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ:

Դասակարգումը կախված է ֆինանսական ակտիվներից առաջացող դրամական հոսքերի բնույթից և այն բիզնես մոդելից, որի ներքո պահվում և կառավարվում է այդ ակտիվը և որոշվում է սկզբնական ճանաչման պահին:

ա) «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող».

Ֆինանսական ակտիվները դասակարգվում են որպես «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» այն դեպքում, երբ այն չի դասակարգվում որպես ամորտիզացված արժեքով չափվող (ինչպես նկարագրված է ստորև) և ոչ էլ որպես ԻԱԱՅՖԱ չափվող (ինչպես նկարագրված է ստորև): Բացի այդ, սկզբնական ճանաչման ժամանակ Ընկերությունը կարող է անշրջելիորեն նախորոշել որպես ԻԱՇԿԿ չափվող ցանկացած ֆինանսական ակտիվ, որը բավարարում է ամորտիզացված արժեքով չափվելու կամ ԻԱԱՅՖԱ չափվելու համար ներկայացվող պահանջները, եթե այդպես անելը վերացնում կամ նշանակալիորեն նվազեցնում է հաշվապահական անհամապատասխանությունը, որն այլապես կարող էր առաջանալ:

բ) «իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող» (ԻԱԱՅՖԱ)

Ֆինանսական ակտիվը դասակարգվում է որպես «իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող» (ԻԱԱՅՖԱ), եթե

- այն պահվում է այնպիսի բիզնես մոդելի ներքո, որի նպատակն ապահովվում է ինչպես պայմանագրային դրամական հոսքերը հավաքելով, այնպես էլ ֆինանսական ակտիվները վաճառելով, և
- սկզբնական ճանաչման պահին այն կազմում է Ընկերության կողմից համատեղ կառավարվող որոշակի ֆինանսական գործիքների պորտֆելի մաս և ունի կարճաժամկետ կտրվածքով շահույթի ստացման իրատեսական հնարավորություն, կամ
- դրա պայմանագրային պայմանները սահմանված ամսաթվերին առաջացնում են դրամական հոսքեր, որոնք բացառապես մայր գումարի և չմարված մայր գումարի նկատմամբ տոկոսների վճարումներ են:

գ) «ամորտիզացված արժեքով չափվող»

Ֆինանսական ակտիվը դասակարգվում է որպես «ամորտիզացված արժեքով չափվող», եթե այն բավարարում է հետևյալ երկու պայմաններին և նախորոշված չէ որպես ԻԱՇԿԿ չափվող՝

- այն պահվում է այնպիսի բիզնես մոդելի ներքո, որի նպատակն է պահել ակտիվները պայմանագրային դրամական հոսքերը հավաքելու համար, և
- դրա պայմանագրային պայմանները սահմանված ամսաթվերին առաջացնում են դրամական հոսքեր, որոնք բացառապես մայր գումարի և չմարված մայր գումարի նկատմամբ տոկոսների վճարումներ են:

Ընկերության ֆինանսական ակտիվները, որոնք չափվում են ամորտիզացված արժեքով ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, ներառում են առևտրային դեբիտորական պարտքեր, բանկային ավանդները, դրամական միջոցները և դրանց համարժեքները, տրամադրված փոխառությունները, ինչպես նաև այլ ֆինանսական ակտիվները:

Ֆինանսական պարտավորություններ

Ընկերության ֆինանսական պարտավորությունները ներառվում են վարկերը և փոխառությունները և առևտրային կրեդիտորական պարտքերը:

«Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ
Ֆինանսական հաշվետվությունների կից ծանոթագրություններ
2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)

Ընկերությունն իր ֆինանսական պարտավորությունները դասակարգում է որպես «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» կամ «ամորտիզացված արժեքով չափվող»՝ կախված պարտավորության ստանձնման նպատակից:

Ընկերությունը չունի «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» որևէ ֆինանսական պարտավորություն:

Ստորև ներկայացված է Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականությունը որպես «ամորտիզացված արժեքով չափվող» դասակարգված ֆինանսական պարտավորությունների համար:

Վարկերը և փոխառությունները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ առանց գործարքային ծախսերի: Սկզբնական ճանաչումից հետո վարկերը և փոխառությունները չափվում են ամորտիզացված արժեքով, իսկ այս արժեքի և մարման արժեքի միջև տարբերությունը փոխառության ժամկետի ընթացքում ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով: Տոկոսավճարները և փոխառությունների հետ կապված այլ ծախսերը ծախսագրվում են կատարմանը զուգահեռ՝ որպես ֆինանսական ծախսերի մի մաս, բացի որակավորվող ակտիվի ձեռքբերմանը, կառուցմանը կամ արտադրությանն ուղղակիորեն վերագրվող փոխառության ծախսումներից, որոնք կապիտալացվում են որպես այդ ակտիվի արժեքի մաս:

Առևտրային կրեդիտորական պարտքերը ճանաչվում են իրական արժեքով, հետագայում չափվում են ամորտիզացիոն արժեքով:

Արժեզրկում

Ընկերության հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների հաշվեկշռային արժեքը վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ, որոշելու՝ արդյո՞ք առկա է որևէ հայտանիշ, ըստ որի ակտիվը կարող է արժեզրկված լինել: Եթե որևէ այդպիսի հայտանիշ առկա է, ապա գնահատվում են այդ ակտիվի (կամ ակտիվների խմբի) փոխհատուցվող գումարները և համեմատվում հաշվեկշռային արժեքի հետ: Եթե գնահատված փոխհատուցվող գումարը փոքր է, ապա հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև գնահատված փոխհատուցվող գումարը, և արժեզրկումից կորուստները ճանաչվում են անմիջապես շահույթում կամ վնասում:

Նմանապես, յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ գնահատվում է պաշարների արժեզրկված լինելը՝ պաշարի յուրաքանչյուր հոդվածի (կամ միանման պաշարների խմբի) հաշվեկշռային արժեքը դրա վաճառքի գնի՝ հանած համալրման և վաճառքի ծախսումները, հետ համեմատելու միջոցով: Եթե պաշարի հոդվածը (կամ միանման պաշարների խումբը) արժեզրկվել է, դրա հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև վաճառքի գին՝ հանած համալրման և վաճառքի ծախսումները, իսկ արժեզրկումից կորուստը ճանաչվում է անմիջապես շահույթում կամ վնասում:

Եթե արժեզրկումից կորուստը հետագայում հակադարձվում է, ակտիվի (կամ ակտիվների խմբի) հաշվեկշռային արժեքը ավելացվում է մինչև դրա փոխհատուցվող գումարի վերանայված գնահատականը (պաշարների դեպքում, վաճառքի գին՝ հանած համալրման և վաճառքի ծախսումներ), սակայն ոչ ավելի, քան այն գումարը, որը կորոշվեր, եթե նախորդ տարիներին ակտիվի (կամ ակտիվների խմբի) գծով ոչ մի արժեզրկումից կորուստ ճանաչված չլիներ: Արժեզրկումից կորստի հակադարձումը ճանաչվում է անմիջապես շահույթում կամ վնասում:

Փոխառության ծախսումներ

Փոխառության ծախսումները, որոնք անմիջականորեն վերագրելի են որակավորվող ակտիվի ձեռքբերմանը, կառուցմանը կամ արտադրությանը, Ընկերության կողմից կապիտալացվում են որպես այդ արժեքի մաս: Ընկերությունն այլ փոխառության ծախսումներն ճանաչում է որպես ծախս այն ժամանակաշրջանում, որի ընթացքում դրանք կատարվել են:

Պահուստներ

Պահուստը ճանաչվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, երբ Ընկերությունն ունի իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և եթե հավանական է, որ պարտականությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք: Եթե դրա ազդեցությունը զգալի է, ապա պահուստը որոշվում է ապագա դրամական արտահոսքերի զեղչման միջոցով՝ օգտագործելով մինչև հարկումը տոկոսադրույքը, որն արտացոլում է դրամի ժամանակային արժեքի վերաբերյալ շուկայի ընթացիկ գնահատումները և կիրառելիության դեպքում պարտավորությանը վերագրվող յուրահատուկ ռիսկերը:

Հետաձգված հարկեր

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները ճանաչվում են, երբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված ակտիվների կամ պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և դրանց համապատասխան հարկային բազաների միջև առկա են տարբերություններ:

Հետաձգված հարկային ակտիվների ճանաչումը սահմանափակվում է այն դեպքում, երբ հավանական է, որ կառաջանա հարկվող շահույթ, որի դիմաց ժամանակավոր տարբերությունները հնարավոր կլինի օգտագործել:

Հետաձգված հարկային ակտիվները կամ պարտավորությունները չափում են՝ կիրառելով հարկային դրույթաչափերը, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ, և ակնկալվում է, որ կկիրառվեն, երբ հետաձգված հարկային պարտավորությունները/ (ակտիվները) կմարվեն/ (կփոխհատուցվեն):

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են, եթե կա ընթացիկ հարկային ակտիվներն ու պարտավորությունները հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք, և հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները վերաբերում են հարկերին, որոնք գանձվում են նույն հարկային մարմնի կողմից:

Հասույթ

Կատարողական պարտականություն և հասույթի ճանաչման պահը

Ընկերության հասույթը առաջանում է էլեկտրաէներգիայի վաճառքից: Գնորդները միաժամանակ ստանում և սպառում են էլեկտրաէներգիայի մատակարարման օգուտները՝ էլեկտրաէներգիայի մատակարարմանը զուգահեռ, և Ընկերությունը ծառայության նկատմամբ հսկողությունը փոխանցում է ժամանակի ընթացքում, այդ իսկ պատճառով, իր կատարման պարտականությունը կատարում է և հասույթը ճանաչում է ժամանակի ընթացքում:

Գործարքի գնի որոշում և գնի բաշխում կատարողական պարտականությունների վրա

Ընկերության հասույթները գլխավորապես ստացվում են ֆիքսված գների պայմանագրերից և, հետևաբար, յուրաքանչյուր պայմանագրից ստացված հասույթի գումարը որոշվում է այդ ֆիքսված գներով, ընդ որում յուրաքանչյուր ապրանքի համար ֆիքսված է միավորի գինը: 2022թ. փետրվարից Հայաստանի էլեկտրաէներգետիկական շուկան ամբողջովին կարգավորվող կառուցվածքից աստիճանաբար անցում է կատարել շուկայի ազատականացված կառուցվածքի՝ աստիճանաբար ներդնելով մրցակցային շուկայի բաղադրիչներ:

Ֆինանսական եկամուտ և ծախսեր

Ընկերության ֆինանսական եկամուտը և ֆինանսական ծախսը ընդգրկում են.

- Տոկոսային եկամուտ,
- Տոկոսային ծախս,
- Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հետ կապված փոխարժեքային տարբերություններից առաջացող օգուտը կամ վնասը:

Տոկոսային եկամուտը կամ ծախսը ճանաչվում է՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույթի մեթոդը:

Արդյունավետ տոկոսադրույթն այն դրույթն է, որը ֆինանսական գործիքի ակնկալվող ժամկետի համար գնահատված ապագա դրամական վճարումները կամ մուտքերը չեղջվում է ճիշտ մինչև՝

- Ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեք կամ
- Ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեք:

Փոխարժեքային տարբերությունից առաջացող օգուտը և վնասը ներկայացվում են զուտ հիմունքով որպես ֆինանսական եկամուտ կամ ֆինանսական ծախս կախված այն հանգամանքից, թե որ դիրքում են կատարվում արտարժույթի փոփոխությունները՝ զուտ օգուտի, թե զուտ վնասի:

«Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ
Ֆինանսական հաշվետվությունների կից ծանոթագրություններ
2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)

Հավելված Ա - ՖՀՄՍ 13 Իրական արժեքի չափման բացահայտումներ

Հետևյալ աղյուսակը ներկայացնում է այն ակտիվները և պարտավորությունները, որոնց իրական արժեքները բացահայտվել են ծանոթագրություններում.

Հոդված	Իրական արժեք Հազար ՀՀ դրամ	Գնահատման մեթոդ	Իրական արժեքի հիերարխիայի մակարդակ	Նշանակալի ոչ դիտարկելի ելակետային տվյալներ
Առևտրային դեբիտորական պարտքեր	458,977	Կարճաժամկետ (12 ամսից պակաս) դեբիտորական պարտքերի հաշվեկշռային արժեքը մոտ է իրական արժեքին:	Մակարդակ 3	Կիրառելի չէ
Տրամադրված փոխառություններ	693,010	Տրամադրված փոխառությունների հաշվեկշռային արժեքը մոտ է իրական արժեքին	Մակարդակ 3	Կիրառելի չէ
Վարկեր և փոխառություններ	14,514,310	Վարկերի և փոխառությունների հաշվեկշռային արժեքը մոտ է իրական արժեքին:	Մակարդակ 3	Կիրառելի չէ
Առևտրային կրեդիտորական պարտքեր	1,119,252	Կարճաժամկետ (12 ամսից պակաս) կրեդիտորական պարտքերի հաշվեկշռային արժեքը մոտ է իրական արժեքին:	Մակարդակ 3	Կիրառելի չէ